

Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրը Հայաստանում հայտարարված է «Աստղագիտության օր»

Մեծահռչակ հայ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 18-ը, Հայաստանում հայտարարված է «Աստղագիտության օր»։ Օրերս այսպիսի որոշում է ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

Ինչպես հաղորդեց ՀՀ Կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյանը, Վիկտոր Համբարձումյանի վիթխարի ժառանգությունը անուրանալի ներդրում է համաշխարհային աստղագիտության, մաթեմատիկայի և ֆիզիկայի մեջ։ Նախարարը նաև պարզաբանեց, որ մինչև օրս գոյություն ունեցող Աստղագիտության միջազգային օրը շարժական տոն է և նշվում է ապրիլի կեսերից մինչև մայիսի կեսերն ընկած որևէ շաբաթ օր։

- Մակայն,- նշեց Սպարտակ Սեյրանյանը,- Հայաստանում այդ տոնը երբևիցե ըստ արժանվույն չի նշվում և սեպտեմբերի 18-ը պաշտոնապես հռչակելով «Աստղագիտության օր», մենք ոչ միայն անթաքույց հարգանքի տուրք ենք մատուցում համաշխարհային մեծության հայ հանճարեղ գիտնական Վիկտոր Համբարձումյանին, այլև կիսբանեք երիտասարդության հետաքրքրությունը դեպի գիտության այդ ոլորտը, ինչպես նաև կնպաստենք Հայաստանում աստղագիտության հետագա զարգացմանը։

Միլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ - 90

ԳՆԱՃ, ՈՐՊԵՍՁԻ ՄՆԱ... ՈՒ ՄՆԱՃ

Հարգանքի տուրք Միլվա Կապուտիկյանի հիշատակին

Լրացավ Միլվա Կապուտիկյանի ծննդյան 90-ամյակը։ Հորեկանական միջոցառումները դեռ առջևում են, իսկ երեկ օրը նվիրված էր բանաստեղծուհու ստեղծագործության վերաբերմանն ու գնահատմանը։

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հունվարի 20-ին մասնակցել է մեծամոտե քանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի բացման հանդիսավոր արարողությանը։

Հանրապետության նախագահը, կարևորելով տուն-թանգարանի բացումը, անգնահատելի է համարել բանաստեղծուհու գրական հսկայածավալ ժառանգությունը։

Նախագահ Սերժ Սարգսյանը Միլվա Կապուտիկյանի որդու՝ Արա Շիրազի ուղեկցությամբ շրջել է տուն-թանգարանում, ասված է ՀՀ նախագահի մամուլ գրասենյակի հաղորդման մեջ։

Ինչպես տեղեկացնում է Աժ հասարակայնության հետ կապերի վարչությունը, Կոմիտասի անվան պանթեոնում ՀՀ Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանը, կառավարության անդամներ, գրողների միության ներկայացուցիչներ, պետական, հասարակական-քաղաքական և մշակութային բազում գործիչներ ծաղկեպսակներ ու ծաղիկներ դրեցին Միլվա Կապուտիկյանի շիրմաքարին հարգանքի տուրք մատուցելով հանգուցյալ բանաստեղծուհու հիշատակին։

Բացման խոսք ասաց մշակույթի փոխնախարար Գավիթ Մուրադյանը. «Մենք եկել ենք Միլվա Կապուտիկյանի մոտ, որն այսօր ինձնուհի տարեկան դարձավ։ Նա իր կյանքով ու գործով ոչ միայն կրում էր



իր ժամանակի մտածողությունը, այլև այդ մտածողությունը ժամանակին քելադրողն էր։ Նա դարձավ այն անհատներից, որոնք ինեց վրա էին վերցնում հենց այդ ժամանակի ծանրությունը։ Միլվա Կապուտիկյանն իսկապես բանաստեղծ-քաղաքացու կերպար էր, առաջին հերթին, իհարկե, հրաշալի բանաստեղծ, որի պոեզիան անգիր գիտեն ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից շատ հեռու»։

«Տիկին Միլվան այն բախտավոր գրողներից էր, ում ստեղծագործությունները տպագրվում, քարգանձվում և վերահրատարակվում էին իր կենդանության օրոք։ Այսօր մեր ձեռքի տակ է բանաստեղծուհու ծննդյան 90-ամյակին նվիրված «90 երգ» հատորը, որը հովանավորել է Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանը», ասաց ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանը։

Սփյուռքահայ գրականագետ Երվանդ

Ազատյանը, որ բանաստեղծուհու հետ շրջել է հայ գաղթօջախներում Մոսկվայից մինչև Լիբանան ու Եգիպտոս, նշում է, որ բանաստեղծուհին տոն էր տանում սփյուռքահայ ամեն օջախի մեջ, երբ այցելում էր. «Միլվայի հեղինակությունը, Միլվայի անձը, կերպարը, նրա տեսիլը հավասար չափով բաժանված է տիյուրքին։ Տոն է նաև այսօր այստեղ, երբ մենք նշում ենք նրա ծննդյան 90-ամյակը»։

Հրապարակախոս Չորի Բալայանը հիշում է. «Երբ 2006 թվականի օգոստոսին «Կիլիկիայի» տախտակամածի վրա էինք և եկավ լուրը, որ Միլվան այլևս մեզ հետ չէ, ես մի հողված գրեցի. «Միլվան գնաց, որպեսզի մնա»։

Համոզված եմ, որ այդպես էլ կա։ Գարեբ արդեն Հայաստանը մրցում է իր պոետներով, բայց դժվար է մրցել Միլվայի հետ։ Նա և՛ փիլիսոփա էր, և՛ արձակա-

գիր, և՛ հրապարակախոս»։

«Նա միշտ անփոփոխ է եղել, երբեք չի փոխվել, չափազանց հայրենասեր, շատ ընկալող ու նկատող, ազգի բարեկեցության ու ապահովության համար ձայն բարձրացնող։ Քնարական էր և ճշմարտախոս։ Պարզապես ժողովրդի ձայնն էր, որ անվախ կարող էր բարձրացնել բոլոր ատյաններում։ «Նա ժողովրդի ձայնն էր ու մտածելակերպը», - ասում է Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանը։ Երևանի թիվ 145 դպրոցը մեկ տարի առաջ է անվանակոչվել Միլվա Կապուտիկյանի անվամբ. դպրոցի սաները երեկ հնչեցրեցին նրա հայտնի մի քանի բանաստեղծություններ, իսկ Ազգային գրադարանի շրջիկ գրադարանը ներկայացնում էր բանաստեղծուհուն նվիրված ցուցահանդեսը՝ գրքերի, հրապարակախոսական հոդվածների, նրա մասին արձագանքների և լուսանկարների տեսքով։

Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարանը երեկ նույնպես բազմամարդ էր։ Չնայած բանգարանում դեռ ավարտված չեն էքսպոզիցիոն աշխատանքները, քանի որ բանաստեղծուհին իր կենդանության օրոք տան ամեն անկյան հետ կապված հանձնարարականներ էր տվել, բայց հիմնական ցուցասրահն արդեն պատրաստ է։ «Թանգարանը ստեղծվել է նրա կտակի համաձայն, նրա ցանկությամբ։ Նա պահանջում էր, որ երբ սենյակները մնան անփոփոխ, մենք ստիպված էինք փակել պատշգամբը և վերածել ցուցասրահի», - ասում է թանգարանի տնօրեն Ռաֆելտա Հաջյանը։

Միլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ - 90

Չվարթ ինքնակենսագրություն



...Այսպես, ուրեմն, ծնվել եմ 1919 թվականի հունվարի 20-ին, Երևանում, առայժմ 86 տարեկան եմ: Պարույր Սևակն ասում է՝ «Առաջին սերը կոտ է գնում»: Իմ ոչ միայն առաջին սերը, այլև առաջին ամուսնությունն էլ «կոտ է գնացել», ավելի ճիշտ՝ կոտ է գնացել ու համը մնացել է քերանում: Ըստ որում, այնպես է մնացել, որ դրանից հետո նորից ամուսնանալու ախորժակս փակվել է ընդմիշտ: Թե սրանից հետո բացվի՞ չգիտեմ... Այնպես որ, ամբողջ կյանքումս եղել եմ միայնակ (այսինքն՝ միակ) դուստրը, միայնակ կին, միայնակ մայր, միայնակ բանաստեղծուհի, հիմա էլ՝ միայնակ... չգիտեմ ինչ, երևի միայնակ ծերունի՞... Ո՛ր է քե միայնակ լինելի: Ամբողջ օրը հեռախոս գնգում է, զանգահարում են քերթերից, ռադիոյից, հեռատեսակայաններից, զանգահարում կազմակերպություններից, անհատներից: Խնդրելով-պահանջում են, պահանջելով խնդրում, որ հարցազրույց տամ, հոդված գրեմ, ելույթ ունենամ, շնորհանդեսները ողջունեմ: Հոգիս դուրս է գալիս դիմողներին «ոչ, ոչ» ասելով, չհաշված հիմնական «ոչը»... Եթե Մայք-Նովան զանգատվում է, քե՝ «Չեն բողոքում վախտին բացվելու, քաղերմեն բեզարիլ իմ», ես էլ զանգատվում եմ, քե՝ «Չեն բողոքում վախտին փակվելու, բացվելումեն բեզարիլ իմ»: Իսկ «բացվիլ» սկսել եմ 1933-ի դեկտեմբերի 24-ից, երբ «Պիո-

ներ կանչ» քերթում տպագրվեց իմ առաջին ոտանավորը: Գրանից հետո մինչև օրս բացվում եմ ու բացվում՝ գրականության պարտեզում բողոքելով 100-ից ավելի բանաստեղծական, արձակ, հրապարակախոսական, մանկական գրքեր՝ հայերեն, ռուսերեն - այլ լեզուներով: Կրթական ցենզիս վիճակը հետևյալն է: Երևանի ցուցադրական դպրոցի ավարտականը այրվել է Պետական համալսարանում այդ տարիներին ծագած հրդեհի հետևանքով, իսկ համալսարանի բանասիրական ֆակուլտետը ավարտելու դիպլոմ չունեմ, որովհետև 1941 թվականին՝ մայրության պատրաստվելու պատճառով պետական քննությունները չեմ հանձնել: Այնպես որ, հիմա քրթերումս կրթական ցենզս ապացուցող միայն երկու վկայական ունեմ: Մեկը՝ ավաչափ դեղնած ձեռագիր մի քերթիկ, որը վկայում է, որ ավարտել եմ Երևանի Մարիամ Թումանյանի տնօրինության տակ գտնվող մանկապարտեզը, մյուսն էլ՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի պատվոգր: Մեկ էլ ունեմ 1941 թվականից Հայաստանի Գրողների միության անդամության գրքույկ: Այն էլ ասեմ, որ իմ այս «ամաչելու չափ» երկար տևող կյանքի ընթացքում կուտակվել են բազմաթիվ շքանշաններ, կոչումներ, մեդալներ, հուշամեդալներ...

Այս, ավա՛ս, որ հիմա այսպես
Լուռ ու անամոք եմ դարձել,
Թողած բնար ու քնքրություն,
Գանգատ ու բողոք եմ դարձել.
Մատուռ էի՝ աղոթքով լի,
Հիմա՛ խոփու մի կոստումն.
Չարերի դեմ չարով լցված՝
Լերկ ու անողոր եմ դարձել:

Ընկերներս մեկիկ-մեկիկ
Կորան այս լայն ճամփաներին.
Այս, բանիսը ընկան հանկարծ,
Արձա՛ն դարձան ճամփաներին.
Ապրողները կողքիս չկան,
Ե՛ս, քե նրանք մնացին ես,
Ու կանգնել եմ այսպես մենակ
Այս խոյ, անձայն ճամփաներին:

Ինչ ունե՛ի՞ մսխեցի,
Քիչ էր, շատ էր - չգիտեմ.
Մեծ ձիթե՞րն են առավել,
Թե մեծ մարդը - չգիտեմ,
Շատ անգամներ երգի տեղ՝
Չե՛ռք պարզեցի ես մարդուն.
Կյանքս այսպես ապրեցի,
Լավ էր, վատ էր - չգիտեմ...

Էլ ինչի՞ ապրել

Եվ քանի՞ անգամ
Ինձ խոսք եմ տալիս,
Հոգով խաղաղվել ու սրտով՝ պաղել,
Էլ չխռովվել.
Էլ չպղտորվել,
Ինձ ի՞նչ, քե դրսում կարկուտ է գալիս,
Ինձ ի՞նչ, քե մի տեղ մանուկ է լալիս,
Ինձ ի՞նչ, քե ծովեց ճամփան քո շիտակ,
Թե կեղծն է խոսում պերճ ղիմակի տակ:
Գլուխը քա՛րը, խոսում է՝ խոսի,
Ե՛ս պիտի քերեմ ժանգը բորբոսի,
Ծուռ ճանապարհը ե՛ս պիտի շուկեմ,
Խեղդվող աշխարհը ե՛ս պիտի փրկեմ...
Այս, քանի՞ անգամ
Ինձ խոսք եմ տալիս լալվել, կապվել,
Քաշվել մի անկյուն, ինձ համար ապրել:

Բայց էլ ի՞նչ ապրել,
Էլ ինչի՞ ապրել...

Բանաստեղծները

Թողեք որ խոսեն բանաստեղծները:
Ծանր ձեր ավար, ծանր քարի պես,
Մի՛ դրեք նրանց շուրթերի վրա,
Ծանր քարի տակ՝
Ծլարձակումով լցված հատիկը կարող է մեռնել,
Երկրի խորքերից մակերես հասած աղբյուրի ակը
Քարին առնելով՝
Կարող է նորից խորթը՛րը զնալ,-
Թողեք որ խոսեն բանաստեղծները:

Նրանք աշխարհ են գալիս հազվադեպ,
Հաճախ դար տևող ընդմիջումներով,
Անցյալ ու գալիք այդ տարիներում ապրող-մեռնողի
Չիրքի և ոգու կուտակումներն են բերում իրենց մեջ,
Այդ տարիներում ասված-չասվածի համահավաքը.
Նրանց է տրված բյուրեղի բերնով ժայթքելու պարտքը,-
Թողեք որ խոսեն բանաստեղծները:

Թողեք որ խոսեն.
Նրանց միամիտ դայալների՛ց է
Ծեր հողագունդը անվերջ մանկանում,
Արտաբերումով կանաչասաղարթ նրանց տողերի՝
Ինչպես ծառերի արտաշնչումից,
Օղը նորոգվում, դառնում է մաքու՛ր.
Եվ ամպրոպացող գայլույթից նրանց
Կարգավորվում է աշխարհի հեղձուկ շնչառությունը,-
Մի՛ արգելալեք տողի և հողի տուրևառումը,-
Թողեք որ խոսեն բանաստեղծները:

Կասեցրած շենքը՝ հապաղի թեկուզ՝
Մի օր կավարտվի,
Միսալ հաշվարկը՝ վնասով թեկուզ՝
Կտողվի մի օր.
Շուրթերի վրա կասեցրած խոսքն է,
Որ արդեն երբեք չի ավարտվելու,
Խորքերում խեղդվող ասելիքն է, որ
Կորչում է անհետ.
Խոսքը խեղդելը՝ մանուկ խեղդել է
Մոր արգանդի մեջ,-
Թողեք որ խոսեն,
Թողեք ու խոսեն բանաստեղծները...



ՄԱՅՐԻԿԻՍ

Վա՛ղ քառամեց սիրուդ գարունը, մա՛յր իմ,
Անվույթ մահը սերըդ տարա՛վ, շուտ տարավ,
Ու միայն ե՛ս մնացի քեզ մտերիմ,
Որպես կորած սիրո մի հուշ, հին մի ցավ:

Նոր բողոքած ուռին ջահել հասակիդ
Օրորոցիս վրա քեզված՝ ծերացա՛վ.
Գու չուզեցիր ուրիշ մի սեր, ուրիշ խիճդ
Աղբյուր լինի քո ճյուղերին չորացած...

Գրսում կյանքն էր հմայքներով կարկաչում,
Միրող գույգեր ու երազներ սիրալատ,
Գու ինձ գրկած օրո՛ր էիր մրմնջում՝
Մռռացած սե՛ր ու երազներ, ու աշխարհ:

Ու մեծացա՛ գնով ջահել քո կյանքի,
Աշխարհ մտա՛ սիրոս անխոց ու պայծառ.
Ու հասկացած չարն ու բարին աշխարհի՛
Մա՛յր, տխրում է սիրող սիրալուք քեզ համար:



Ա՛յս, ինչ տամ քեզ, ինչ նվիրեմ քո սիրուն,
Ի՞նչ կա կյանքում հատուցումի արժանի,
Գիտեմ, ե՛ս եմ քո աշխարհը՝ աշխարհում,
Ինձ հետ ես դու հյուսել հույսերդ հիմի:

Մա՛յր, ինձ համար փառք չեմ տենչում կյանքի մեջ.
Բայց կուզե՛ի՞ գոհորոթայնըդ անհաս
Լինել արժա՛ն, լինել հերո՛ս, լինել մե՛ծ,
Որ քո կյանքը, կորած կյանքըդ չափստաս...

1940 թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

Ունեցած հացը նշխարի չափ է,
Ունեցած հողը խաչքարի չափ է.
Իսկ տառապանքը,
Իսկ անգոր վառքը,
Ափե-ափ գարկող վիրավորանքը
Ծովի,
Օվկիանի,
Աշխարհի չափ է...

Միջազգային գիտական ծրագրեր.

Մասնակցության հնարավորություններ

«Գիտություն» թերթի հարցերին պատասխանում է ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտատեխնիկական ծրագրերի բաժնի պետ Տիգրան ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԸ

- Պարոն Արզումանյան, որքան ինչ հայրենի է, Ձեր բաժնի գլխավոր խնդիրն է օգտակար լինել ՀՀ ԳԱԱ ինստիտուտներին և անհար գիտնականներին ակտիվորեն մասնակցելու միջազգային դրամաշնորհային ծրագրերին: Ի՞նչ եք հասկանում ստեղծված «միջազգային»: Գա ներառում է ամբողջ աշխարհը, թե՛ ավելի սահմանափակ տարածաշրջան է: Ավելի որոշակի, ո՞րն է բաժնի գործունեության հասցեն:

- Ընդհանուր առմամբ ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտատեխնիկական ծրագրերի բաժնի գործունեությունը հիմնականում ուղղված է նպատակով ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությանը միջազգային գիտատեխնիկական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերի (ԵՄ ՇՏ) վրա: Սակայն մինչև շարունակելը, ներկայացնեմ բաժնի ստեղծման նախապատմությունը: Այն ստեղծվել է ՀՀ ԳԱԱ-ում գործող ԵՄ ՇՏ տեղեկատվական կենտրոնի հենքի վրա, որն, իր հերթին, ՀՀ ԳԱԱ-ում ստեղծվել էր 2003 թվականին ԻՆՏԱՍ կազմակերպության աջակցությամբ: ԻՆՏԱՍ-ի այդ նախաձեռնության նպատակն էր օժանդակել ԱՊՀ երկրներում ԵՄ ՇՏ-ի կոնտակտային/տեղեկատվական կազմակերպությունների ցանցի ստեղծմանը, ինչպիսիք գործում են ԵՄ անդամ երկրներում, անցյալ դարի 90-ականների կեսերից:

Այսպիսի ցանցի ստեղծման անհրաժեշտությունը գալիս է այն փաստից, որ ԵՄ ՇՏ-երը բավականին ծավալուն և բարդ ծրագրեր են ու դրանց զարգացումը և համապատասխան խորհրդատվական ու տեղեկատվական ծառայությունների մատուցման միջոցով, դյուրացնել գիտնականների աշխատանքը, ազատել նրանց բազմաթիվ ու հաճախ փոփոխվող կանոնակարգի փաստաթղթերի հետ ծանոթանալու անհրաժեշտությունից և, այդպիսով, խթանել նրանց մասնակցությունը:

Մյուսնով է պայմանավորված, որ մեր գործունեության ուշադրության կենտրոնում է ԵՄ ՇՏ-ը, որում մենք արդեն բավականին մասնագիտացել ենք: Սակայն այժմ ՀՀ ԳԱԱ ղեկավարության կողմից մեր առջև խնդիր է դրված ընդլայնել գործունեության ուղղվածությունը՝ ներառելով նաև այլ միջազգային ու տարբեր երկրների ազգային դրամաշնորհային ծրագրերը, որոնց կարող են մասնակցել մեր գիտնականները:

- Ինչո՞ւ են մի փոքր ավելի մանրամասն պարզել ԵՄ շրջանակային ծրագրերի և բաժնի գործունեության բաղկացուցիչների մասին: Այնուամենայնիվ, ինչո՞ւ հարկապես ներդրական ծրագրերը:

- 2004թ-ին ԵՄ հետազոտությունների և Հայաստանի ընդգրկումը «Եվրոպական հարևանության բաղաբաղակառուցություն» ԵՄ ռազմավարության շրջանակներում, ինչպես նաև, հետազոտում ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրի մշակումը ԵՄ-Հայաստան գործընկերության նոր հեռանկարներ են բացում ներառյալ գիտության և տեխնոլոգիաների ոլորտը: Մասնավորապես, Գործողությունների ծրագրի գիտությանը և տեխնոլոգիաներին վերաբերող դրույթները սահմանում են Հայաստանի գիտական կազմակերպությունների պատշաճ մասնակցությունը ԵՄ Հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերում և համատեղ նախագծերում խրախուսելու անհրաժեշտությունը:

Պետք է նշել, որ ԵՄ հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերը գիտության գրեթե բոլոր բնագավառներում հանդիսանում են համավերլուծական համագործակցային գիտատեխնիկական նախագծերի ֆինանսավորման հիմնական գործիքը, որում կարող են մասնակցել նաև աշխարհի այլ երկրների կազմակերպությունները՝ այդ թվում նաև Հայաստանից:


2007-ից մինչև 2013 թվականը գործելու է հերթական 7-րդ շրջանակային ծրագիրը (7ՇՏ), որի ընդհանուր բյուջեն կազմում է ավելի քան 50 մլրդ եվրո: Այնուհետև է, որ Հայաստանի կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը տվյալ ծրագրին կարող է նպաստել միջազգային գիտատեխնիկական համագործակցության խթանմանը, եվրոպական առաջատար գիտական կենտրոնների փորձի ներդրմանը և դեպի Հայաստանի գիտատեխնիկական ոլորտ լրացուցիչ ֆինանսական միջոցների ուղղորդմանը:

Ինչ վերաբերում է բաժնի գործառնություններին, ապա մեր կողմից իրականացված մասնակցության խթանման գործընթացը հիմնականում իրագործվում է միջազգային և եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածման և իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերում մասնակցության հետ կապված բոլոր հարցերի շուրջ խորհրդատվության և օժանդակության տրամադրման միջոցով:

Գործունեության ընթացքում ստեղծվել է շահառուների տվյալների բազա, որը ներառում է մոտ 800 կազմակերպություն/անհատ ու շարունակում է համալրվել, պատրաստվում և էլեկտրոնային տարբերակով տարածվում է ամենամսյա տեղեկատվական պարբերական, որոնցում ներկայացվում է տեղեկատվություն միջազգային ծրագրերի, գիտական միջոցառումների ու հայտարարված բաց մրցույթների վերաբերյալ: Նույն ցանցով պարբերաբար տարածվում են նաև 7ՇՏ-ի տարբեր երկրների կոնտակտային կազմակերպություններից ստացված գործընկերների փնտրման հայցադիմումները, որոնց օգնությամբ հնարավոր է եվրոպական գործընկերներ գտնել համատեղ նախագծերի պատրաստման ու ներկայացման համար: Գիտատեխնիկական ինստիտուտներին օժանդակություն է ցուցադրվում տվյալ կազմակերպության կամ հնարավոր համատեղ նախագծի զարգացման մասին տեղեկատվության եվրոպական գիտատեխնիկական կենտրոնի տեղեկատվական կապում տեղադրման գործում (CORDIS): Բաժնի աշխատակիցները շահագրգիռ գիտնականներին խորհրդատվություն և օժանդակություն են ցուցաբերում եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն ու ընթացիկ նախագծերի իրականացմանն առնչվող բոլոր հարցերի շուրջ: Պետք է նշել, որ օժանդակություն է ցուցաբերվում ոչ միայն ակադեմիական ինստիտուտների, այլ նաև գերաստեղծական ինստիտուտների, համալսարանների, մասնավոր ՓՄՁ-ների և ՀՀ այլ կազմակերպություններ ներկայացնող գիտնականներին: Կարող է զարմանալի թվալ, սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելի շատ մեզ խորհրդատվության համար դիմում են ոչ ակադեմիական կազմակերպությունների ներկայացուցիչները: Պատճառների մասին չեն ցանկանում եզրահանգումներ անել, սակայն հուսով են այս հրապարակումը կնպաստի ակադեմիական ինստիտուտների ավելի ակտիվացմանը:

- Քանի որ այս գրույցով մենք, որոշ առումով, ամփոփում ենք անցած տարիներ, խնդրում են ներկայացնել որոշ արդյունքներ, այլ խոսքով այսօր ինչպիսի՞ն է հայ գիտնականների, գիտական ինստիտուտների և կազմակերպությունների մասնակցությունը ներդրական դրամաշնորհային ծրագրերին և Ձեզ անչափ գոհացնում է, արդյոք, ներկա իրավիճակը:

- Մեր տրամադրության տակ դեռ չկան ամփոփ տվյալներ տարվա կտրվածքով, սակայն 2008թ. օգոստոսի դրությամբ ՀՀ կազմակերպությունները ներկայացված են եղել ԵՄ 7ՇՏ-ի մրցույթներին ներկայացված 54 նախագծերում՝ որոնցից 11-ում մասնակցել են ՀՀ ԳԱԱ ինստիտուտները, մասնավորապես, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, Բյուրականի աստղադիտարանը, Ինֆորմատիկայի և ավտոմատ



տացման պրոբլեմների ինստիտուտը, Մանրենի ակադեմիայի կենտրոնը, Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Նախագահությունը: Ընդհանուր առմամբ հաստատվել են հայկական մասնակցությամբ 11 նախագծեր, որոնցից ՀՀ ԳԱԱ ինստիտուտները և նախագահությունը մասնակցում են 4 նախագծերում: Ինչպես տեսնում ենք, հաջողության գործակիցը մոտ 10 % է կազմում, ինչը համապատասխանում է տվյալ ծրագրի ընդհանուր միջին հաջողության գործակիցներին:

Գոհունակությամբ պետք է նշեմ, որ նպատակային աշխատանքների արդյունքում ՀՀ ԳԱԱ-ն ՀՀ Գիտության պետական կոմիտեի հետ համատեղ, ներգրավվել է «Սևծովյան տարածաշրջանում գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության հաստատում» նախագծին, որին մասնակցում են նաև կազմակերպություններ տարածաշրջանի 12 այլ երկրներից: Նախագծի հիմնական նպատակն է խթանել գիտատեխնիկական համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանի երկրների միջև՝ մասնակից երկրներում առկա գիտատեխնիկական և նորամուծական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության կուտակման, գիտության և տեխնոլոգիաների ոլորտում ընդհանուր ռազմավարական գործունեության մշակման և 2011-2012 թթ. գիտատեխնիկական նախագծերի համատեղ մրցույթի իրականացման միջոցով:

Կարևորվում է ՀՀ ԳԱԱ մասնակցությամբ «Սևծովյան փոսկրապակցվածություն» նախագիծը, որի նպատակն է Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի պետություններում տարածքային և միջազգային օպտիկամալոխային արագազոր սեգմենտներ կառուցել և նրանց հետագա միացումը GEANT2 Եվրոպական գիտատեխնիկական ցանցի հետ:

ՀՀ ԳԱԱ-ն ներգրավվել է նաև մրցույթի ներկայացված մեկ այլ ԵՄ 7ՇՏ-ի նախագծում, որի նպատակն է նպաստել գիտական համագործակցության զարգացմանը ԵՄ-անդամ և Հայաստանի կապում միջազգային օպտիկամալոխային արագազոր սեգմենտներ կառուցել և նրանց հետագա միացումը GEANT2 Եվրոպական գիտատեխնիկական ցանցի հետ:

Նկատի ունենալով ծրագրի բարդ լինելը և այլ օբյեկտիվ հանգամանքներ, արդյունքները կարելի է համարել օրինաչափ: Առավել ակտիվ մասնակցությանը խաչընդատող հանգամանքներից կարելի է նշել միջազգային մակարդակի տեխնիկական հազցվածություն ունեցող, արդիական ու մրցունակ հետազոտություններով զբաղվող գիտատեխնիկական կենտրոնների, ինչպես նաև համաֆինանսավորում պահանջող նախագծերում մասնակցելու համար համապատասխան միջոցների կամ հիմնադրամների բացակայությունը և ծրագրերի շրջանակներում ստացված դրամաշնորհների հարկումը Հայաստանում: Այստեղ կարևորվում են ՀՀ կառավարության և գիտատեխնիկական ոլորտի համար պատասխանատու մարմինների համակարգված ու նպատակալից գործողությունները՝ վերոնշյալ խնդիրների կարգավորման և միջազգային ծրագրերին մասնակցելու համար առավել նպաստավոր պայմանների ստեղծման ուղղությամբ:

ՀՈՒՐԵԼՅԱՆ

Աիդա Ավետիսյան - 70

Վերջերս հայ գիտական հասարակայնությունը նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աիդա Ավետիսյանի 70-ամյա հոբելյանը: «Մենք շնորհակալ ենք Ձեզ Ձեր գիտական գործունեության համար, ինչի շնորհիվ Հայաստանում զարգացան քիմիական մի շարք ուղղություններ», - իր շնորհավորական խոսքում նշեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Աիդա Ավետիսյանին շնորհավորեցին նաև ՀՀ ԳԱԱ Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Արոթ Մանթաշյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Միսակ Դավթյանը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ, քիմիական հասարակայնության ներկայացուցիչներ:

Աիդա Ավետիսյանը 1960 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը:

1975 թ. ստացել է քիմիական գիտությունների դոկտորի աստիճան, մեկ տարի անց՝ նաև պրոֆեսորի: 1996 թ. Աիդա Ավետիսյանը դարձել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Երկար տարիներ նա հաջողությամբ ղեկավարում է Երևանի պետական համալսարանի Քիմիայի ֆակուլտետը՝ միաժամանակ կատարելով նաև օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պարտականությունները:

Ակադեմիկոս Աիդա Ավետիսյանի ղեկավարությամբ պատրաստվել են մեծ թվով բարձր որակավորմամբ մասնագետներ՝ թեկնածուներ և դոկտորներ: Նա ակտիվ գործունեություն է ծավալում ժամանակակից մեթոդական ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ:

Նրա նախաձեռնությամբ ֆակուլտետում բացվել են նոր մասնագիտություններ: Օրգանական քիմիայի ամ-

բիոնում նրա ղեկավարությամբ կատարվում են հետազոտություններ օրգանական սինթեզի այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին է թթվածին, ազոտ և ծծումբ պարունակող հետերոցիկլիկ միացությունների հիման վրա ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների սինթեզը:

Աիդա Ավետիսյանը 500-ից ավելի գիտական աշխատությունների և մոտ 120 արտոնագրերի հեղինակ է:

Աիդա Ավետիսյանի արժանիքները բարձր են գնահատվել ինչպես հասարակության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Նա պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, արժանացել ՀՀ նախագահի մրցանակին՝ գիտական ասպարեզում ունեցած կարևորագույն նվաճումների համար:

Աիդա Ավետիսյանը Միջազգային ճարտարագիտական (1999), ՌԳ բնական գիտությունների (2000) և Բնապահպանության ու կենսագործունեության անվտանգության միջազգային (1996) ակադեմիաների անդամ է:

Արմեն ՄԻՄՆՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մեր մոլորակի կլիման ձևավորվում է արեգակից անընդհատ ստացվող էներգիայի հաշվին: Դրա մոտ 30%-ն անմիջապես անդրադառնում է տիեզերք, իսկ մնացածը անցնում է մթնոլորտի միջով և ջերմացնում երկրի մակերևույթը: Երկրագունդը էներգիան անդրադարձնում է ջերմության ձևով: Սակայն, այսպես կոչված, ջերմոցային գազերը մթնոլորտում բույլ չեն տալիս, որ էներգիան երկրի մակերևույթից անցնի տիեզերք: Հիմնական ջերմոցային գազերն են ածխածնի երկօքսիդը, օզոնը, մեթանը, ազոտի եմփոքսիդը, հալոդիադիաքորոնները, արդյունաբերական ծագում ունեցող այլ գազեր, ինչպես նաև ջրային գոլորչիները: Բացի ջրային գոլորչիներից, նշված գազերի մակարդակի բարձրացումն անմիջապես կապված է մարդու գործունեության հետ: Ջերմոցային էֆեկտի ավելի բան 60 %-ի պատճառը ածխածնի երկօքսիդն է: Դրա արտանետվող տարեկան ծավալը ներկայումս կազմում է 23 մլրդ տոննա կամ մթնոլորտում այդ գազի ընդհանուր պարունակության մոտ 1%-ը: Մարդու գործունեության հետևանքով առաջացած ածխածնի երկօքսիդը ներառվում է ածխածնի բնական շրջանառության մեջ:

Յուրաքանչյուր տարի բնական ճանապարհով մթնոլորտի, օվկիանոսների և ցամաքի բուսականության միջև տեղի է ունենում միլիարդավոր տոննա ածխածնի երկօքսիդի փոխանակություն: Այդ գազի պարունակության և բնական համակարգերի միջև եղած փոխանակությունը խիստ հավասարակշռված է: Նախաարդյունաբերական ժամանակաշրջանի 10 հազ. տարիների ընթացքում ածխածնի երկօքսիդի պարունակությունը ունեցել է 10%-ից պակաս տատանում: Իսկ 1800 թ. սկսած 200 տարիների ընթացքում դրա բնական ավելացել է ավելի քան 30%-ով:

Կլիմայի վրա երկրորդ կարևոր մարդածին ներգործողներն աէրոզոլներն են, որոնք ջերմոցային գազեր չեն, մանրադիտակային մասնիկներ են և առաջանում են ծծմբի երկօքսիդից, արտանետվում են ջերմակայաններից, ծխից, բափոնների այրումից:


Ջերմոցային էֆեկտի ձևավորման մեջ իր բաժինն ունի նաև մեթանը: Արտանետված մեթանը մթնոլորտում կարող է պահպանվել մինչև 12 տարի:

Որոշ հաշվարկներով առաջիկա 100 տարիների ընթացքում սպասվում է Երկրի 1.4-5.8°C գոլորջ տաքացում: Ջերմաստիճանի նույնիսկ 1.4°C բարձրացումը կլիմայի վրա կրողնի ավելի մեծ ազդեցություն, քան անցյալում 10 հազ. տարիների ընթացքում կլիմայում դիտված որևէ փոփոխություն: Երկրագնդի տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացումը 2-3°C-ով և մթնոլորտային տեղումների կրճատումը 10-15%-ով առաջ կբերի նաև լուրջ փոփոխություններ բնական և գյուղատնտեսական էկոհամակարգերում: Այդ դեպքում համապատասխան բնական էկոհամակարգերը լեռնային գոտում (կախված տարածաշրջանից) կարող են բարձրանալ 200-400 մետրով: Դրա հետևանքով գգալիորեն կփոփոխվի կոհակարգերի զբաղեցրած տարածքը, լուրջ տեղաշարժեր կդիտվեն դրանց ֆիտոբյուրսում և ֆաունայում, որոնք անշուշտ, կունենան իրենց ներգործությունը մեր Հանրապետության, այդ թվում նաև Սևանի ավազանի, կենսաբազմազանության վրա: Դրա հետ կապված ներկայումս կարևոր խնդիրներ են դրվում Հայաստանում անտառների ու Սևանա լճի պահպանման, ինչպես նաև հողերի էրոզիան կանխելու համար:

Սևանի ավազանի կլիմայի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը, ջրային խոշոր ավազաններից և անտառային զանգվածներից ունեցած հեռավորությունը, արեգակնային ճառագայթման ինտենսիվությունը և այլ գործոններ: Կլիմայի սպասվող փոփոխությունները, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Սևանի ավազանում, կարգապես անապատային երևույթները, կկրճատվեն ջրային պաշարներից, կփոփոխվեն մշակելի տարածքների սահմանները: Նման սցենարի դեպքում կլիմայի փոփոխման հողից ջրի գոլորչիացումը և ջրագրությունը: Դա հատկապես նկատելի կլինի չորվող տարածքներում, որտեղ բույսերին ջրի անհրաժեշտ քանակը ապահովվում է միայն մթնոլորտային տեղումներով: Ստեղծված պայմաններում հատկապես արդիական են դառնում վարելահողերի խոնավապահպանման միջոցառումների կիրառությունը և բույսերի չորադիմացկուն տարրերի մշակության ընդլայնումը: Մշակության համար պետք է ընտրել այնպիսի տարրեր, որոնք իրենց գենետիկական առանձնահատկություններով և հողի ու մթնոլորտի չորության դեպքում կարող են նորմալ բերք ապահովել: Այդ ուղղությամբ հետազոտարարները կարող են համարել սելեկցիոն այն աշխատանքները, որոնք կատարվում են ներկայումս տարբեր շրջաններում շրջանացված ցորենի սորտերի և Հայաստանում, հատկապես, «Էրեբունի» արգելոցում աճող ցորենի վայրի տեսակների միջև հիբրիդացման և սելեկցիոն սորտեր ստանալու ուղղությամբ: Հետազոտությունները ցույց են տվել, որ վայրի ցորենները օժտված են բարձր չորադիմացկունությամբ, ցրտադիմացկունությամբ և սնկային հիվանդությունների նկատմամբ դիմադրողականությամբ, դրանց հատիկները պարունակում են մինչև 26 % սպիտակուցներ և աչքի են ընկնում այլ արժեքավոր հատկություններով: Որպես ծնողական ձևեր այդ աշ-

խատանքներում կարելի է օգտագործել Հայկական երաշտադիմացկուն սորտերը, այդ թվում Սպիտակահատը, Գալգալոսը, Կարմիր կունդիլը և այլն:

Հացահատիկի արտադրության խնդիրը մեր սակավահող հանրապետության և, հատկապես, Սևանի ավազանի տարածաշրջանի համար խիստ կարևոր է: Քանի որ հացահատիկի ցանքերի ընդարձակումը հնարավոր չէ, այդ պատճառով հացի արտադրության հիմնական ճանապարհը մնում է հասկաբույսերի բերքատվության բարձրացումը: Սևանի ավազանում հացահատիկային մշակաբույսեր ցանվում են բոլոր շրջաններում ծովի մակերևույթից մինչև 2400 մ բարձրության վրա: Դրանք զբաղեցնում են ամբողջ ցանքատարածությունների մոտ 30-35 %-ը: Հիմնականում մշակվում են աշնանացան ցորենը և գարնանացան գարին: Տարբեր հետազոտողների կողմից հիմնավորվել է այդ մշակաբույսերի բերքատվության կազմավորման մեջ էկոլոգիական գործոնների բաժանակական գնահատման մեթոդի կիրառումը, հաշվի առնելով մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները և մշակության ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման համալիրը: Մշակվել է եղանակ, որը բույլ է տալիս բերքահավաքից 3 ամիս առաջ մոտավոր ճշտությամբ կանխորոշել աշնանացան ցորենի և գարնանացան գարու հավանական բերքը: Սակայն կլիմայի համաձորակային տաքացման բացասական ներգործությունից գերմ մնալու համար հարկավոր է վերականգնել չգործող սորտափորձադաշտային և սերմնաբուծական տնտեսությունների գործունեությունը: Հայ սելեկցիոնների կողմից ստացված ցորենի չորադիմացկուն և ցրտադիմացկուն սորտերը պետք է կրկին ենթարկվի փորձարկման և շրջանացման: Կարևոր է բույսերի չորադիմացկունության բարձրացումը դրանց անհատական զարգացման ընթացքում, կիրառելով այնպիսի միջոցներ, որոնք կնպաստեն դրանց բերքունի փառուցվածքի ձևավորմանը: Որոշ հետազոտությունների համաձայն եթե արտադրության պայմաններում մշակաբույսերի տեխնոլոգիական պրոցեսների կատարման մակարդակը հասցվի սորտափորձադաշտերի մակարդակին, ապա աշնանացան ցորենի բերքատվությունը կարելի է բարձրացնել միջին հաշվով շուրջ 2.3-2.4 անգամ, իսկ գարնանային գարուն՝ 2 անգամ:



ներքին բարձրացումը դրանց անհատական զարգացման ընթացքում, կիրառելով այնպիսի միջոցներ, որոնք կնպաստեն դրանց բերքունի փառուցվածքի ձևավորմանը: Որոշ հետազոտությունների համաձայն եթե արտադրության պայմաններում մշակաբույսերի տեխնոլոգիական պրոցեսների կատարման մակարդակը հասցվի սորտափորձադաշտերի մակարդակին, ապա աշնանացան ցորենի բերքատվությունը կարելի է բարձրացնել միջին հաշվով շուրջ 2.3-2.4 անգամ, իսկ գարնանային գարուն՝ 2 անգամ:

Երկրագնդի ջերմացման հետևանքով ձևավորված պայմաններում հարկավոր է վերանայել հողի մշակման գոյություն ունեցող համակարգը: Պետք է մշակել և կիրառել ագրոտեխնիկական այնպիսի եղանակներ, որոնք կմեծացնեն հող մտնող ջրի քանակը և հատկապես հողաշերտերում դրա պահպանումը: Կարևոր է նաև համապատասխան մշակաբույսերի սերմերի ցանքի ճիշտ խորության և խտության ապահովումը: Խոշոր հատիկներով սերմերի խորը և նոսր ցանքի դեպքում քիսակալման հանգույցը ձևավորվում է հողի խորը շերտերում, որտեղ խոնավության աստիճանն ավելի բարձր է: Ոչ քիչ կարևոր նշանակություն կունենա անջրդի հողատարածությունների վրա ձյան կուտակումը, հողի հետ ոչ մետաղական հանքատեսակների ցեղիտների, պեշիտների խառնումը, որոնք խոնավությունը կլանելու և բույսերին մատակարարելու հատկություն ունեն: Բույսերի չորադիմացկունության բարձրացման մեջ նշանակալի է նաև հողի կանոնավոր պարարտացման և սերմերի նախացանքային մշակման, ինչպես նաև ոռոգման ժամկետների ու եղանակների ճիշտ ընտրությունն ու օգտագործումը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ կլիմայի գոլորջ փոփոխությունների տարբեր սցենարների դեպքում գգալիորեն կկրճատվի Հայաստանի լեռնային արտադրարարի, խոտհարքների մթերատվությունը: Դրա համար հարկավոր է մշակել աշխատանքի համապատասխան եղանակներ չորության պայմաններում խոտհարքներում բուսական ծածկույթի և հողի խոցելիությունը փոքրացնելու և բույսերի ադապտացման հնարավորությունները մեծացնելու համար: Արտասահմանյան մի շարք լեռնային երկրների փորձը ցույց է տվել, որ արտադրարարի և խոտհարքների մթերատվությունը կարող է պայմանավորված լինել հետևյալ գործոններով՝ բուսականության ֆիտոստակային կազմով, արտադրարարի կենսաբանական արածեցման և խոտհարքներում խոտի հավաքման տեխնիկական կոպտության, ինչպես նաև այլ միջոցառումների մակարդակով, որոնք կիրառվում են համապատասխան խոտհարքներում, հաշվի առնելով տեղանքի հողային և կլիմայական առանձնահատկությունները:

Բերված գործոններն իրար հետ սերտորեն կապված են և կազմում են միասնական համալիր, բնութագրելով խոտհարք-արտադրարարի տնտեսության վարման մակարդակը: Սևանի ավազանում լեռնային մարգագետնային գոտում մթնոլորտային տեղումները հանդիսանում են առաջատար լիմիտավորող գործոն, որը և ապահովում է վերգետնյա խոտի զանգվածը: Հատկապես կարևոր դեր են կատարում ապրիլի 20-25-ից մինչև հունիսի 10-15-ը տեղացող անձրևները, երբ լեռնային գոտու արտադրարարում օդի միջին ջերմաստիճանը կազմում է 5-12°C:

Երկրի հնարավոր ջերմացման դեպքում բնական և գյուղատնտեսական էկոհակարգերում կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ համապատասխան գիտական միջոցառումների մշակումը արդիական խնդիր է և կարող է մեղմացնել այն բացասական ներգործությունները, որոնք կդիմելու կլիմայական փոփոխությունների դեպքում:

ՀՈՐԵԼՅԱՆ

Սերգեյ

ՄՈՎՄԻՍՅԱՆ - 80

ՀՀ ԳԱԱ նախագահությունում հանդիսավորությամբ նշվեց նշանավոր մակաբուծաբան, ակադեմիկոս Սերգեյ Մովսիսյանի ծննդյան 80 տարին: Բազմաթիվ շնորհավորանքների և բարի մաղթանքների ամփոփումը եղավ ՀՀ ԳԱԱ նախագահության օղջույնի ուղերձը, որում մասնավորապես ասված է.

Մեծարգո Սերգեյ Հովհաննեսի
ՀՀ ԳԱԱ նախագահությունը և Բնական գիտությունների բաժանմունքը սրտանց շնորհավորում են Ձեզ՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

1958-1976 թթ. ընդունվել եք Մոսկվայի Կ. Ի. Սկրյաբինի անվան Հելմինթոլոգիայի Համալսարանական ինստիտուտի ասպիրանտուրան, աշխատել որպես կրտսեր գիտաշխատող և հելմինթների ֆաունայի և կարգաբանության լաբորատորիայի վարիչ:

1962 թ. պաշտպանել եք քեկնածուական, իսկ 1971 թ.՝ դոկտորական թեզեր:

1976 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի հրավերով Դուք վերադարձել եք Հայաստան ՀԳԱ-ի Կենդանաբանության ինստիտուտը ղեկավարելու համար, որտեղ Ձեր անուրանալի դերն եք ունեցել ինստիտուտի զարգացման և գիտական ձեռքբերումների գործում:

1982 թ. Դուք ընտրվել եք ՀԳԱ բրթակից-անդամ, իսկ 1990թ.՝ ակադեմիկոս:

Շուրջ 30 տարի դուք եղել եք ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի տնօրեն, իսկ 2007 թ. ԳԱԱ նախագահի հրամանով նշանակվել՝ Կենդանաբանության և Հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական ղեկավար:

Շնորհիվ Ձեր ակտիվ գործունեության Հայաստանի և Ռուսաստանի Գիտությունների ակադեմիաների աշխատանքների համագործակցության ասպարեզում ստեղծվել են ամուր կապեր հայ և ռուս կենդանաբանների միջև, որոնք շխախտվեցին անգամ Մովսեսյան Միության փլուզումից հետո:

Ձեր նախաձեռնությամբ 1996 թ. ստեղծված է ՌԳԱ Մակաբուծության և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտների համատեղ գիտական փորձարարական կենտրոն:

Դուք հեղինակ եք ավելի քան 300 գիտական հրատարակումների, որոնց թվում 9 մենագրություններ: Ձեր ղեկավարությամբ պաշտպանվել են 4 դոկտորական և 16 քեկնածուական թեզեր: Անուրանալի են Ձեր ծառայությունները ԳԱԱ գիտական ուղղությունների ձևավորման և նրանք գործնական կյանքում իրականացնելու գործում:

Երկար տարիներ Դուք հանդիսանում եք մասնագիտացված գիտական խորհրդի նախագահ, ՌԳԱ Մակաբուծության ինստիտուտի մասնագիտացված գիտական խորհրդի փոխնախագահ, Մակաբուծաբանների եվրոպական դաշնության վարչության անդամ և Հայաստանի և Ռուսաստանի բազմաթիվ ընկերությունների և խորհուրդների անդամ, 2005 թ արժանացել եք ՌԳԱ Կ. Սկրյաբինի անվան մրցանակի:

Հարգելի Սերգեյ Հովհաննեսի, նշելով Ձեր ծննդյան հիշարժան տարելիցը, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, երկար տարիների կյանք, գիտական նորանոր հաջողություններ և երջանկություն Ձեր անձնական կյանքում:

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս
Վ. Պ. ՀԱԿՈՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԲԳԲ-ի ակադեմիկոս-բարոսուղար

Մեր հարևանները իրենց տարածքներում ջնջում-վերացնում են հայկական ամեն մի հետք

Եվ այսպես, ըստ վերջին լուրերի, վրաց ուղղափառ եկեղեցու սպասավոր հայր Տարիելը, չնայած հոգևոր և պետական աշխատի հավաստագրումներին, շարունակում է Թբիլիսիի Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցու բռնազավթման և վրացականացման բարբարոս և սրբապիղծ առաքելությունը: Հայր Տարիելը ոչ միայն բանդել, ավիրել է եկեղեցու ներսի հայկական պատկանությունը, վրացականացրել է հայկական որմնակարները, բեմը, շիրմներն իրենց հուշարձաններով, խաչակալները, այլև արդեն ձեռնարկել է եկեղեցու բակում բաղված անձնակների վերացմանը: Գործի են դրված բուլդոզերներ, քերիչներ, բանդոլդ-ոչնչացնող ամեն ինչ՝ ջնջելու, վերացնելու հայկականության ամեն մի հետք և ապացույց: Ի դեպ, Նորաշենը նման բարբարոսության առաջին գոհը չէ: Նման ճակատագրի են արժանացել Վրաստանի տարածքում եղած շատ եկեղեցիներ, և երե չի հաջողվել վրացականացնել, պարզապես պայթեցվել են՝ հար և նման մեր մյուս հարևանների վարքագծի:

Փաստված է, որ վրաց եկեղեցու հնարամիտ սպասավորը իրականացրել է մի քստմենի կեղծարարություն ևս. Հյուսիսային Վրաստանի ինչ-որ տեղանքից հզոր բեռնատարներով Նորաշենի եկեղեցու բակ է բերել տվել մի քանի վիթխարի տապանաքարեր (անշուշտ, վրացական գրություններով), խանդակներ է փորել տվել և պատրաստվում է «հուղարկավորել» այդ շիրմաքարերը: Ուրեմն, ինչով վրացական չի Նորաշենը վերափոխված ներսով և բակում բաղված վրացիների շիրմաքարերով:

Այսինքն, ևս որոշ ժամանակ և մեք՝ հայերս ոչ մի ապացույց չենք ունենա և կկորցնենք Նորաշենը հայկական եկեղեցի և հուշարձան կոչելու մեր սուրբ իրավունքը:

Չենք կարծում (ինչպես շատ է ասվել), թե այդ Տարիել սրբապիղծը ինքնագույն է իրականացնում իր երկրի դարավոր հարևանի ժառանգությունը սեփականացնելու անագործյն շարագործությունը: Անտարակույս է, նա այդ իրավունքը ստացել է վրաց եկեղեցու և ինչու չէ՞ նաև պետական աշխրհից:

Եվ որպեսզի ինչ-որ կերպ դիմագրավեն հայկական կողմի գայրալից բողոքներին, որոնք բարձրաձայնվեցին (բեռն ուշացումով) բարձր մակարդակով, մեր «բարեկամ» վրացիները դիմեցին նոր ստանդարտ վրացական հռչակեցին մեկ տասնյակից ավելի հայ եկեղեցիներ բուն Հայաստանում: Ինչպես ասում են՝ ամօրը կորցրածի անպատկառությունը չափ ու սահման չունի: Մեր մյուս հարևանների նման Վրաստանում նույնպես ծրագրված այս բարբարոսությունը լայնորեն ծաղկում է:

«Գիտությունը» դեռ կանդիդատուսնա այս ամօրալի պատմության շարունակությանը, իսկ ներկա համարում Հայաստանի ճարտարապետությունը ուսումնասիրող կազմակերպության ղեկավար Մամվիլ Կարապետյանի մատուցմամբ ձեզ ենք ներկայացնում Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցու բռնազավթման տարեգրությունը:

Պարմական տեղեկանք

Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է Թբիլիսիի կենտրոնական մասում, Մեյդանի այժմ էլ գործող սբ. Գևորգ եկեղեցուց ոչ հեռու, Լեսելիձե փողոցի եզրին: Այն հիմնադրվել է 1467 թ.:



Հարյուրամյակներ շարունակ Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցին հայ և օտար եկեղեցիներն ու այցելուները իրենց բողոք գրավոր աղբյուրներում էիջում են որպես Տիֆլիսի գլխավոր հայկական եկեղեցիներից մեկը: Այդ փաստը չեն քաջցրել նաև վրաց ուսումնասիրողները, բայց 1989 թ. սկսած եկեղեցին սեփականելու կամ յուրացնելու նպատակով վերջիններիս կողմից շղայարող ստանդարտներն առանձնապես սուր բնույթ ստացան 1994 թ. վերջերին:

Հայոց եկեղեցին վրացականի վերածելու գործողությունների ժամանակագրություն

29 դեկտեմբերի, 1994 թ.: Երևանում լույս տեսնող «Ազգ» օրաթերթի (N 250) առաջնորդող «Թբիլիսի. սբ. Նորաշենի հայկական եկեղեցին վտանգված է» հոդվածն ահագանգում է, որ եկեղեցու ներսում պահվող գրքերը սկսել են դուրս բերել, իսկ հաջորդ քայլերը լինելու են եկեղեցու նորոգումն ու վերանվանումը:

29 դեկտեմբերի: Երևանից ժամանած նկարիչ Խաչատուր Գևորգյանին և լրագրող Եկատերինա Վազարյանին ընդունում է Վրաստանի պատրիարք Իլյա 2-րդի քարտուղարը՝ հայր Թեոդորոս Չոխաձեն: Հյուրերի նպատակը մեկն էր՝ իմանալ, թե վերջապես ի՞նչ է սպասվում Նորաշենի եկեղեցուն: Կարճ գրույցը ցավոք վերածվեց վիճաբանության և անցավ սուրի վրա, քանի որ քարտուղարը հյուրերին անգամ չէր առաջարկել նստել: Վեճի ընթացքում Չոխաձենն նշել է, որ վրացական Սիոնի հարևանությամբ անբույլատրելի է, որ լինի հայոց եկեղեցի: «Մենք այն պետք է դարձնենք վրացական»: Ապա ավելացրել է, թե «վրացիները շինել են և ծախել հայերին», իսկ Խ. Գևորգյանի պատասխանից հետո («Գա ի՞նչ արտահայտություն է, եկեղեցին ամ ու ծախի առարկա չէ, և բացի այդ ոչ հայը, ոչ ռուսը և ոչ էլ արևմտաեվրոպացին, այլ ձեր վրացի Թ. Կ. վիրկվելու, որ այդ եկեղեցին հայկական է), առանց ցտեսություն ասելու հայր Չոխաձենն քողեց հյուրերին ու շտապով հեռացավ:

25 հունվարի, 1995թ.: Ծրջակա հայ բնակիչները նկատել էին, որ արդեն մի քանի օր



Եկեղեցու ներսում ինչ-որ աշխատանքներ էին կատարվում: Հետաքրքրվողների հարցմանը պատասխան է տրվում, թե բեմը ձեռքբերում է և ընթանում են վերականգնման աշխատանքներ:

լուրը առնելով, Նորաշենում հաստատված վրաց Տարիել քահանային իրենց բողոքն են հայտնում Վիրահայոց մշակութա-բարեգործական ընկերության նախագահ Գ. Մուրադյանը և Վրաստանում ՀՀ դեսպան Լ. Խաչատրյանը, սակայն հայր Տարիելը արհամարհանքով է վերաբերվում վերջիններս և շարունակում դեկավարել ներսի բանդան աշխատանքները:

5 փետրվարի: Արդեն հիմնավեր բեմի (հայոց եկեղեցիներում բեմը բավական բարձր է և այնտեղ հասնում են բարե սանդուղքներով) մեջտեղում կանգնեցվում է վրացական ոճով մի մարմարակերտ խաչ, իսկ բեմառջում վրաց եկեղեցիներին բնորոշ կամարակապ պատնեջ:

8 փետրվարի: Ոչնչացվում են եկեղեցում խորանի մոտ, պատի մեջ ազդելով երկու գեղարանդակ խաչքարերը, որոնք կրում էին 1650 թ. ընդարձակ արձանագրություններ ջուղայեցի ուստա Պետրոսի ձեռքով եկեղեցու գմբեթի կառուցման կարևոր հիշատակությամբ: Քանդում են նաև պատի սվաղի այն մասը, որի երեսին պահպանվել էին Հովնաթանյան դպրոցից Միքայելի երկու որմնակարները (19-րդ դարի սկիզբ):

12 փետրվարի: Մի խումբ տեղացի հայեր, որոնց բլում է մի երիտասարդ լուսանկարիչ, ցանկանալով ներս մտնել եկեղեցի, հանդիպում են հայր Տարիելի և նրա շուրջ համախմբված մի խումբ վրացի երիտասարդների դիմադրության: Վերջիններս, հայերի երեսին շարտելով «ոտը եղբ աչխտեղից, գնացեք ձեր Երևանը, դուք խղճով աշխարհով մեկ ցրված ժողովուրդ եք, հերիք չէ՞ ձեզ երկու ժամ ենք նվիրել (նկատի ունեն սբ. Գևորգ և Լյմիածնեցոց եկեղեցիները Մեյդանում և Հավաբարում), սա մերն էր, դուք գնե՛ք մեզանից, մեր Իլյան մեծ հայրենասեր է և ուզում է Մեյդանը վերածել ուղղափառության կենտրոնի»՝ ու այլ աչապիսի խոսքեր, ձեծի ենթարկեցին նաև հայերից մեկին, որը ցանկանում էր լուսանկարել եկեղեցուն կառուարված ավերածությունները:

15 փետրվարի: Վրաց ծեսով կատարվեց եկեղեցու օծումը: Հանդեսը կատարողն էր Աբխազիայից փախուսական քահանա Գանիլը: Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցին կոչվեց Խարեթա (Ավետյաց):

17 փետրվարի: Օրբաճակցի (թաղամաս Թբիլիսիում) մի խումբ գայրացած հայ կամայք եկեղեցի մտնելով հարձակվում են հայր Տարիելի վրա՝ փետնելով վերջինիս մորթը: Սա մի կերպ իրեն ազատելով կանանց ձեռքից, գոռում է. «Գեո ս՝ ր եք, սբ. Գևորգն ու Լյմիածնեցոցն էլ կվերցնենք»:

22 փետրվարի: Տարիել քահանան ինքնագույն շարունակում է եկեղեցու հայկական նշանների քանդումը, փակվում են արևմտյան ճակատից բացված լուսամուտները:

23 փետրվարի: Հավատացյալ Վարդանուշ Միքայելյանը եկեղեցի մտնելով նկատում է, որ խորանի ավերումից հետո դրա առջև գոյացրել են 1,5 մ խորությամբ մի փոս, իսկ նրա մոտ օսկորներ էին ցրիվ տրված: Հայ Տարիելը, մոտենալով կնճջը, օտոր է հրում է օսկորները դեպի փոսը և մի տախտակով ծածկում այն, իսկ Վարդանուշ մայրիկին կոպտորեն հրելով դուրս է հանում եկեղեցուց:

24 փետրվարի: Մեյդանի սբ. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Եղիշե Հարությունյանը և Լյմիածնից ժամանած մի սարկավագ եկեղեցի են մտնում այն պահին, երբ հայր Տարիելը սանդուղքի աստիճաններին կանգնած, մի ձեռքով երկաթե բուք գործիք, իսկ մյուսում գոդոդ սարք (նա նախկինում մոմագործ արհեստավոր է եղել), ինչ-որ բան էր քանդում պատի մեջ: Տեր Եղիշեի խնդրանքին, թե մի պահ իջեք, խոսելիք կա՛ վրացի հոգևորականը պատասխանում է. «Մի քահանա էլ ես եմ, ինչպես որ դու, և ես կարգադրություն անեմ և իմ աշխատանքն են կատարում»՝ ու շարունակում է իր «աշխատանքը»:

28 փետրվարի: Կոպտորեն եկեղեցուց դուրս են հանում գրադարանավարուհի Օֆելյա Սանամյանին, որը ևս վրդովված էր ավերումների լուրից և ցանկացել էր տեսնել կատարվածը: Այդպես շատ հայերի արգելում են մուտք գործել եկեղեցի:

13 մարտի: Վրացահայ համայնքի հրավերով Թբիլիսի են ժամանում Գարեգին և Գրիգորիս արքեպիսկոպոսները, Եզրաս վարդապետը և ՀՀ ԳԽ մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Ռ. Պապայանը: Երկու օր անց վերջիններիս ընդունում է Իլյա 2-րդ պատրիարքը: Չորսյի ընթացքում որոշվում է փակել եկեղեցին մինչև Հայաստանից մասնագետների մի խմբի հրավիրումը, որոնք կհանդիպեն վրաց մասնագետների հետ և կորոշեն եկեղեցու ճակատագիրը: Իսկ եկեղեցի այցելել պատրիարքը մերժում է պատասխանելով, թե վրաց ժողովուրդը բնած չէ, իսկ հայերի սիրտն էլ ցավում է, ուստի պետք չէ հուզումներ առաջացնել:

17 մարտի: Եկեղեցու հարավային պատին է մոտենում մի էքսկավատոր և պատից ընդամենը 1 մ հեռավորությամբ ընդգրկուն տարածքի վրա 2 մ խորությամբ փոս է փորում: Ծրջակա հայերի հարցին պատասխանում են, թե եկեղեցու համար խանութ և կարի արհեստանոց պիտի կառուցեն:

19 մարտի: Համապատասխան շինանյութի փոխարեն եկեղեցու բակ են փոխարկվում բետոնե սակայական խողովակներ, որոնք ակնհայտորեն հարկավոր էին կոյուղու նորոգման համար:

20 մարտի: Եկեղեցու հյուսիսային լուսամտի գոգին տեղադրվում են վրաց սրբապատկերներ, որպեսզի վրացի հավատացյալները այդտեղ մոմ վառեն:

28 մարտի: «Ախալի քառքա» («Նոր սերունդ») քերթում (N 20) լույս տեսավ «Ո՛ւմ համար է դողանցում զանգը» վերնագրով և «Փակեցին վրացական եկեղեցին» ենթավերնագրով հոդվածը, որտեղ Գիորգի Շալուսաչվիլին ցավ էր հայտնում, որ Վրաստանի մեջ հայերին հաջողվել է փակել տալ արդեն օձված և գործող վրաց եկեղեցին: Հողվածագիրը, որը դժգոհ էր վիրահայ համայնքի դրսևորած ակտիվությունից, իր նյութն ավարտում է հետևյալ անտեղի լրատվությամբ. «Թբիլիսիի Գլյան արվարձանում, նորակառույց վրաց եկեղեցու ավագ քահանա Վասիլի վրա հարձակվել է ոմն հայ Գևորգյան, որը հանցագործության համար, սակայն, իրավապահ մարմինների կողմից պահվել է միայն 1 օր»:

29 մարտի: Թբիլիսիում լույս տեսավ «Մարջի» («Հմուտ») գլխաղակակ բերքի 4-րդ համարը «Թբիլիսիում վրացիների առջև փակեցին եկեղեցին» վերնագրով անհեղինակ հոդվածով: Այստեղ ևս ափսոսանք է հայտնվում, որ նորաբաց վրաց եկեղեցին հայերի ճնշմամբ փակվել է, և քննադատվում են վրաց իշխանությունները, որ տեղի են տվել հայերին: Այս հոդվածի վերջում էլ անտեղի գրագետներ են տարվում Աբխազիայի «Քարդամյանի» >6

Մեծ անվան գումարտակի և Ջավախքի հայերի իբր հակադրացական գործունեության միջև և շեշտվում է, որ վրաց իշխանությունները հերքական անգամ մեզ են հայերի հանդեպ:

18 ապրիլի: Թբիլիսիում լույս տեսնող «Закавказские военные ведомости» N 76-ում տպագրված հոդվածում եղիմյակ Միքայել Ալիևը հայր Տարիելի կատարածը կոչում է վանդալիզմ, բանի որ եկեղեցին սեփականելու նպատակով ոչնչացվել էին խորանը և 19-րդ դարի սկզբների որմնակարները (ոչնչացված խաչքարերի մասին ոչինչ չի նշել): Ալիևը գրում է, որ Նորաշենի սբ. Աստվածածինը արդեն 7-րդ հայոց եկեղեցին է, որ վերջին տարիներին վրացացվել է Թբիլիսում, իսկ սբ. Աստվածածինը հետո հերքեց սբ. Նշանին:

Ամփոփում

Խորին ցավով պիտի արձանագրենք, որ հայ մշակույթի հուշարձանները միտումնավոր ոչնչացման կամ յուրացման երևույթը Վրաստանում արդեն տասնամյակների վաղեմություն ունի, բայց այն, ինչ կատարվում է 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո ու առայսօր, կարելի է բերես համեմատել միայն 1930-ական թվականների վերջերին ու 40-ականներին կատարվածի հետ: Վերջին 5-6 տարիների ընթացքում միայն Թբիլիսիում անհետացել ու ոչնչացվել է շուրջ 210 հայերեն վիճագիր արձանագրություն: Նորոգման անվան տակ բարբարոսաբար քանդվում-ավերվում են հայոց եկեղեցիներին բնորոշ բարձր բեմերը, մկրտարանի ավազանները, խաչկալներն ու մինչև անգամ գանգակատները: Էլ չենք խոսում խաչքարերի ու տապանաքարերի մասին: Այդ կերպ Տիֆլիսի երբեմնի 41 հայկական եկեղեցիներից մինչև վերջերս կանգուն մնացած 16 եկեղեցիների մեծ մասը այլափոխվեց ու վրացացվեց վերջին 5-6 տարիների ընթացքում: Միայն այս տարվա հունվարին գրեթե ամբողջապես ավերվեց Չորաբաշի սբ. Գևորգ եկեղեցին (Հավլաբաում), որի մասին ոչ էլ տրևե տեղ հիշվեց կամ գրվեց, կարծես 1600 թ. գանձակեցի հայ գաղթականները երբևէ չլինել կատարել այս եկեղեցին: Եվ ահա երբը հասավ Նորաշենին:

Հայ մասնագետները պիտի հանդիպեն վրացի մասնագետների հետ: Մեծ բան: Պայքարելով Շամքորեցոց Կարմիր Ավետարան եկեղեցու քանդման պատճառով էլ հանդիպեցին, բայց եկեղեցու կանգուն մնացած մասերն էլ ամբաստանելու փոխարեն քանդեցին, իսկ փլվածքները որպես շինարար հեռացրին: Ի՞նչ արդյունք կարող ենք ակնկալել այդ հանդիպումից, երբ գործ պիտի ունենանք Հովնաթանյան նկարչական դպրոցից 4 անկրկնելի որմնակարներն առանց խղճի խաչքի քերտոգրափող հայր Տարիելի ու նրա նմանների հետ: Այսօր Վրաստանում ջնջում են հայի հետքը, մեր պատմությունը, կործանում են մշակույթի ու արվեստի եզակի գործերը միայն նրա համար, որ վրացական չեն: Անկասկած, եթե ձևափոխությունների միջոցով եկեղեցիները յուրացնել չհաջողվեր, դրանք ևս պիտի հիմքից ավերվեին:

Ցավ է, մեծ ցավ, որ քաղաքակրթության համաշխարհային գանձարանում իրենց ուրույն տեղն ունեցող վրացիների ներկայիս սերնդի որոշ պատասխանատուներ ընտրել են դրացի ժողովրդի մշակույթի ոչնչացման կամ յուրացման հանցավոր ու ամոքաբեր ճանապարհը: Առավել ցավալի է, որ մեր մշակութային ժառանգությանը տիրանալու անպատվաբեր գործողությունները ղեկավարում ու իրականացնում է բարձրաստիճան մի հոգևորական: Այո, Վրաստանի պատրիարքը (երբեմն հորջորջվում է կարողիկոս) հուշարձանների պահպանման և վերականգնման պետական վարչության լուս համաձայնությամբ գլուխ է կանգնել ծավալված վանդալիզմին: Բավական է միայն նշել 1992 . նրա կատարած մի հայտարարություն. «Վրաստանի տարածքում գտնվող բոլոր հուշարձանները, առավել ևս կրոնական բնույթ ունեցողները, Վրաստանի պետության և վրաց եկեղեցու սեփականությունն են»: Մեզմասած, մոլորության մեջ են նաև վրացի այն մտավորականները, որոնք հայոց եկեղեցի քանդող կամ յուրացնող պատրիարքին համարում են «մեծ հայրենասեր»: Մեզը, մեզը այն ժողովրդին, որի մտավորականը կարող է վանդալիզմը հայրենասիրության հետ շփոթել: Բայց բնության մեջ չարն ու կեղծիքը երկար ճանապարհ չունեն: Եվ ի վերջո անկասկած գալու է հատուցման պահը:

ԳԻՏՆԱԿԱՆ ԵՆՈՇԱՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԻՐՈՒՄ

Երկար տարիներ երկրաշարժերի նախանշաններ հայտնաբերելու նպատակով բեմատիկ ֆինանսավորումով կատարում ենք գիտահետազոտական աշխատանքներ, մասնավորապես կապված Արարատյան սեյսմափորձադաշտի տարածքում առկա Սուրենավան, Արարատ, Վեդի, Գառնի, Արզնի, Բջնի հանքային աղբյուրների երկրաքիմիական անալիզի, ինչպես նաև ջերմաստիճանի փոփոխության:

Եվ այն, ինչին ակնհայտ է մ լինում երկար տարիներ, մեծ ցավ է պատճառում ինձ, նախ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի և հետո որպես գիտության բնագավառի աշխատողի:

Հարցը նշված հանքային աղբյուրներում տիրող անմխիբար և բարձրորդ վիճակի մասին է:

Առարատի հանքային աղբյուրների մի մասը հորատանցքերից հոսում է աննպատակ (3 հատ), մի մասը օգտագործվում է մի մասնավոր անձի կողմից, որը կառուցել է 2 լողավազան, (տղամարդկանց և կանանց, մուտքը 200 դր., գործում է միայն ամռանը) և մեկ լողավազան՝ իր ընտանիքի համար:

Խորհրդային տարիներին Արարատի ցեմենտի գործարանի տարածքում գործում էր «Золотой Ключ» ասոցիացիան, նշված գործարանի բանվոր-ծառայողների համար: Այսօր այն չի գործում, հանքային ջրերը հոսում են աննպատակ և վերածվում ճահիճների:

Գործարանի տիրոջից պահանջվում է մի փոքր ֆինանսական ներդրում և այն կարելի է վերաբացել և օգտագործել մեր բնակչության բուժման համար:

Շատ ավելի անմխիբար վիճակում է գտնվում Վեդիի հանքային աղբյուրների ցանցը. (Վեդի քաղաքից հյուսիս-արևելք 1.5-2 կմ) 4-հորատանցքից ջրերը հոսում են կլոր տարիներ, գետի տեսքով: Այն գտնվում է տրավերտինների շահագործման դաշտում, որը նույնպես կարիք ունի վերահսկման:

Բարվոր վիճակում են Արզնիի հանքային աղբյուրները, որոնք օգտագործվում են N 1 ասոցիացիայի կողմից:

Բջնիի հորատանցքը, որից դուրս եկող ջրերը բափվում են Հրազդան գետի հին հունը, գտնվում է Բջնիի հանքային ջրերի «Մայր գործարանից» 1.5 կմ - դեպի արևելք: Արարատ, Սուրենավան, Վեդիի հանքային ջրերը իրենց բաղադրությամբ տիպիկ «Նարզան» և «Եսենտուկի» հանքային ջրերն են, որոնց 1 լիտրը Ռուսաստանի Գաշնությունում վաճառվում է 1 \$ համարժեք գնով: Այլ խոսքով, դա Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ ասոցիացիաներն են, որոնք հայտնի են աշխարհին իրենց «Նարզան» բուժիչ ջրով, մասնավորապես հողագավառի տառապող հիվանդների համար, որոնց թիվը Հայաստանում հասնում է տասնյակ հազարների:

Հրավիրում են պատկան մարմինների ուշադրությունը սույն հարցերի վրա՝ դրական արձագանքի ակնկալիքով:

Լեոնիդ ՀԱՍՎԵՐԳՅԱՆ

Երկրաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱՄ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Գառնիի երկրաֆիզիկական դիպլոմատի վարիչ

Եվ, այնուամենայնիվ, երկիրը պարզվում է...

Տիեզերքը Գալիլեյի աչքերով

Հանրահայտ է, որ ուղիղ 400 տարի առաջ, 1609 թվականին Գալիլեո Գալիլեյը աստղադիտակի օգնությամբ ուսումնասիրեց աստղերը ու մոլորակները: Սա աստղադիտակ կիրառելու առաջին փորձն էր աշխարհում: Իտալական Ֆլորենցիայի Արզետրա աստղադիտարանի և Իտալիայի Գիտության պատմության թանգարան-ինստիտուտի գիտնականների մի խումբ որոշել է առանձնահատուկ նշել այդ նշանավոր իրադարձության տարելիցը ու վերստեղծել այդ նույն աստղադիտակը և այն միջավայրը, որի պայմաններում աշխատում էր Գալիլեյը:

Իհարկե, օպտիկական սարքի ճշգրիտ կրկնօրինակը վերականգնելն անհնար էր, որովհետև դիտակի բնօրինակից պահպանվել է լոկ մեկ ոսպնյակ, որը Գալիլեյը նվիրել էր Ֆլորենցիայի տիրակալ հերցոգ Կազիմո II Մեդիչիին:

Գիտնականներին հաջողվեց միայն կատարել ոսպնյակի, նրա պարագծերի ճշգրիտ հաշվարկը և հատուկ անալիզի միջոցով՝ ապակու վիճակը:

Հավաքած տվյալների հիման վրա վերականգնված աստղադիտակի օգնությամբ աստղագետները ծրագրել են արձանագրել բոլոր այն երկնային մարմինները, որոնք հիշատակված են Գալիլեյի 1610 թվականին հրատարակված «Աստղային լրաբեր» գրքում: Այսօրվա դրությամբ ավարտված են



Լուսնի և Սատուրնի դիտարկումները, և հետագոտողները ձեռնարկում են արդեն Յուպիտերի և Վեներայի ֆազերի ուսումնասիրությունը:

Ծրագրի նպատակները, սակայն, սրանով չեն սպառվում: Գիտնականների մտահոգացմամբ վերջին հաշվով իրենք պետք է հնարավորություն ստանան աշխարհին նայել իրեն՝ Գալիլեյի աչքերով: Հայտնի է, որ նա մահացավ, երբ կույր էր: Հետագոտողները բուռն ցանկություն ունեն ստանալ Գալիլեյի ԳՆԹ-ն, հետագոտել, այստորոշել այն հիվանդությունը, որ դարձել է հանճարեղ գիտնականի կույրության պատճառ և մանրակրկիտ վերականգնել այն պայմանները, որոնցում եղել է Գալիլեյը: Առայժմ, սակայն, գիտնականներին արգելում են մոտենալ Սանտա-Կրոզե բազիլիկում քաղված Մեծն Գալիլեյի աճյունին:

Բացակա ներկայություն...

Ամեն անգամ, երբ կյանքից հեռանում են ազնվազունը, անշահ ու անշահադետ, բարձր ինտելեկտի և բարոյականության տեր անհատներ, մարդկությունն ու աշխարհը մեկ անգամ վերստին սրբանում է:

Արարատի մարզի Չանգակատուն գյուղը, նրա համայնքը այդպիսի զգացողություն ունեցավ և այդպես, երբ կյանքից հեռացավ վաստակաշատ մանկավարժ, հասարակական եռանդուն գործիչ, բարձրակարգ մտավորական Վարազդատ Գրիգորյանը:

Նա, ում անվան հետ կապված է Չանգակատան հարյուրամյա կրթության մի ողջ փայլուն դարաշրջան: Նա, ում ազնվագույն ջանքերով ու խնկարկելի տառապանքով տեղի ունեցավ հայրենի գյուղի 1960-80-ական թվականների հոգևոր, բարոյական, մտավոր ծարձակումն ու զարթոնքը, զարգացումն ու մաղկունքը:

Այո, նա եզակի անհատ ու եզակի ներկայություն էր ոչ միայն հայրենի համայնքում, այլև նախկին Արարատի շրջանն ընդգրկող սույն տարածաշրջանում:

Եզակի էր մայրենի լեզվի ու գրականության կատարյալ իմացությամբ, հայերեն բանավոր ու գրավոր խոսքի անզուգական տիրապետմամբ, գիտելիքների բազմակողմանի անսպասելի պաշարով, բարոյական բարձր նկարագրով ու հարուստ ներաշխարհով:

Նրա ներկայությունը շուրջ էր հաղորդում ցանկացած հասարակական ձեռնարկի ու արարողության:

Վարազդատ Գրիգորյանը շուրջ կես հարյուրամյակ որպես մանկավարժ (բաժին բարձրագույն իմաստով) անշահախնդրորեն ծառայեց հայրենի գյուղի և շրջանի հասարակայնությանը, որից 30 տարին միջակարգ կրթության տնօրենի պարտավորեցնող դիրքում ու պաշտոնում:

Նրա նվիրումն ու առօրյա-ամենօրյա ջանքերը գրագետ ու բարեկիրք սերունդ պատրաստելու ուղղությամբ, իզուր չանցան:

Իր տնօրինած կրթության դասասենյակներից դեպի մեծ կյանքի ուղեծիր դուրս եկան բազմաթիվ բանիմաց, փայլուն մասնագետներ, որոնք անփոխարինելի դիրք գրավեցին կրթության, գիտության, գինվորական գործի և ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում:

Համայնքը, ժողովուրդը պարզորոշ տեսավ, զգաց և մեծապես գնահատեց ու իմաստավորեց Վ. Գրիգորյանի՝ հմուտ մանկավարժի ու իմաստուն դաստիարակի անհատնում ու անշահախնդիր ջանքերը և նրան իրավամբ դասեց իր արժանի գավալների շարքում: Այնուամենայնիվ, այս ամենից հետո ես կրկին չեմ կարող բացել իմ գարնանը նրա խոսքի՝ անզուգական կուլտուրայի, էթիկայի և մտավոր բարձր կարողությունների հանդեպ:

Այո, նա անզուգական էր որպես մայրենի լեզվի ուսուցիչ, հայ գրականության ջատագով, հրապարակախոս, ազգային ու համամարդկային ճշմարիտ արժեքների քարոզիչ, և վերջապես որպես հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ:

Անշափելիորեն ձգողական էր նրա խոսքի հմայքը և մեծապես ազդեցիկ ֆիզիկական ու հոգևոր ներկայությունը:

Համազուտակները ամեն անգամ համակ ուշադրությամբ ու զարմանքով էին ունկնդրում, երբ ամբիոններից հեռում էր նրա արքայալի խոսքը՝ շիտակ, հատուկ, հանդիսավոր: Վ. Գրիգորյանը մտերիմն ու բարեկամը եղավ մեծն Սևակի և այլ բարձրանուն հայորդիների:

Գյուղի նորօրյա կենսագրության հոգևոր-մշակութային բազում գեղեցիկ, իմաստալից էջեր գրվեցին նրա ձեռամբ, յուր սքանչելի, անօրինակ գործունեությամբ: Եվ Չանգակատան հավաքական հիշողության մեջ նա մնաց և ընդմիշտ մնալու է այդպիսի տարողունակ չափուններով:

Պետք է հստակ ընդգծել, որ Վարազդատ Գրիգորյանը, որպես մարդ-քաղաքացի և որպես անհատ, միշտ ու մշտապես կարողացավ վեր բարձրանալ անձնական առօրյա ու կենցաղային մանր-մունր հարցերից, շահերից ու հաշիվներից, կարողացավ վեր բարձրանալ նաև իր անձնական ճակատագրից:


Ինձ համար բարեբախտություն է, որ հանդիսացել եմ նմանօրինակ մեծ ընդգրկումների տեր անհատի և մեծատառով Ուսուցչի՝ անմոռանալի ու անկրկնելի Վ. Գրիգորյանի աշակերտն ու հոգևոր սանը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱՄ Պարմուրյան ինստիտուտի ավագ գիտաշխատող, պարմական գիտությունների քննաժող

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԱՐԱՐ. ԲԵՌԻՆԻ ՎԵՂԱԺՈՂՈՎԸ

Տղազրության և դասրաս ՇՇ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ֆաղափարական անվան գրքի վարիչ Արմեն ՇՈՎՍԵՓՅԱՆԻ «Ամիաբանությունն ազգային-դեմոկրատիկ անվան գրքի ստեղծմանը» դայանական վերնագրով դասափաղափարական ուսումնասիրությունը: Մեր խնդրանքով հեղինակը սրամարտի է մեզ մի հասված այդ գրից, որն այսօր «Գիտությունը» ներկայացնում է ձեր ուշադրությանը:

Կրկին պետք է վերհիշել հին, շատ հին մի ասացվածք. խելք տալու հետ միասին, Աստված հային գրել է սեփական ազգային-պետական շահերը գիտակցելու, վերահաս վտանգը կանխագրելու, միաբանված կանխարգելիչ բայեր ձեռնարկելու կարողությունից: Կավելացնել նաև անվրեպ կողմնորոշվելու անկարողությունը: Մեր ժողովրդի պատմական ընթացքի մշտական ուղեկից անմիաբանությունն ծնող հատվածապաշտական ինքնակեր այս երևույթը վերաբերում է նաև հայոց դիվանագիտությանը, որը անմիաբանության օրինակներ է ցուցանում: Յավթը չունենալ այս ոլորտի լիարժեք պատմություն, որը հնարավորություն կընձեռեր բազմաթիվ օրինակներով փաստարկելու ասելիքը: Նորագույն շրջանում ազգային անմիաբանության, դրանից սերված ծախսողման բերն դասական օրինակ է Բեռլինի վեհաժողովի առիթով հայերի բռնած տարածադիրքը: Մեր ժողովրդի հանցալի գործողությունները, որը սև հետք բողեց մեր ժողովրդի հետագա ճակատագրի վրա:



Կրկին պետք է վերհիշել հին, շատ հին մի ասացվածք. խելք տալու հետ միասին, Աստված հային գրել է սեփական ազգային-պետական շահերը գիտակցելու, վերահաս վտանգը կանխագրելու, միաբանված կանխարգելիչ բայեր ձեռնարկելու կարողությունից: Կավելացնել նաև անվրեպ կողմնորոշվելու անկարողությունը: Մեր ժողովրդի պատմական ընթացքի մշտական ուղեկից անմիաբանությունն ծնող հատվածապաշտական ինքնակեր այս երևույթը վերաբերում է նաև հայոց դիվանագիտությանը, որը անմիաբանության օրինակներ է ցուցանում: Յավթը չունենալ այս ոլորտի լիարժեք պատմություն, որը հնարավորություն կընձեռեր բազմաթիվ օրինակներով փաստարկելու ասելիքը: Նորագույն շրջանում ազգային անմիաբանության, դրանից սերված ծախսողման բերն դասական օրինակ է Բեռլինի վեհաժողովի առիթով հայերի բռնած տարածադիրքը: Մեր ժողովրդի հանցալի գործողությունները, որը սև հետք բողեց մեր ժողովրդի հետագա ճակատագրի վրա:

Նախապատմությունը. համաձայն 1878 թ. փետրվարին Ման-Ստեֆանոյում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի, քրիստոնյաներին օսմանյան լծից ազատագրելու համար, պատերազմ հայտարարած և հաղթած կողմի Ռուսաստանի պահանջով, ի թիվս Թուրքիայի կայսրության մեջ գտնվող Բալկանյան մի շարք ժողովուրդների անկախացման և ինքնավարություն տալուն, Թուրքիան պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարել: Փաստորեն օրակարգում հայտնվեց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերի արժարժումը: Կովկասյան ճակատում Ռուսաստանի համար պատերազմի հաջող ընթացքը և, հիմնականում Ղարսի և Բայազետի հերոս հայազգի զենքակիր Լորիս-Մելիքովի ու Տեր Ղուկասովի, Լազարևի, Այսազովի, Շելիովիկիովի գլխավորած ռուսական զորամիավորումների կողմից Արևմտյան Հայաստանի զգալի մասի գրավումը ազատագրական հույսեր ներշնչեցին հայությանը: Ճիշտ է, այդ պայմանագրից խիստ դժգոհ էին եվրոպական պետությունները, հատկապես Անգլիան ու Ավստրո-Հունգարիան, սակայն այս դեպքում հզորացող Ռուսաստանի կողմից, հատկապես՝ հայկական հողերի գրավումը նրանց փաստի առաջ էր կանգնեցրել, իսկ հայությանը օսմանյան լծից ազատագրման իրական շանս էր տրվել: Յավթը, այդ ամենը միատեսակ չընդունվեց արևմտահայության, հիմնականում ազդեցիկ հոգևոր բարձրադիր դասի կողմից: Այն պահին, երբ Լորիս-Մելիքովի գլխավորած ռուսական հաղթական կորպուսը, ավելի քան 40 հազար հայ կամավորների մասնակցությամբ և ամբողջ ռուսահայության, այդ թվում՝ ցարական պալատի ազդեցիկ գործիչների ջանքերով, նյութական և բարոյական օգնությամբ կոծկ էր մղում ու, թվում էր, թե հանգուցալուծումը մոտիկ է, Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը Կոնդակովի դիմեց «օսմանյան հզոր տերության քաղցր հովանավորության ներքո ապրող» արևմտահայությանը՝ ռուսների դեմ պայքարի կոչով: Մեկ այլ սուլթանին ուղղված դիմումի մեջ ասված է. «Հայոց ազգը բարեբախտ կղավանի իրեն, զինքը ձեռ անման չնաշխարհիկ բարեմասնությունը օժտված երեշտակային սիրտ ունեցող մեծ ինքնակալի հպատակը գտնվելու համար»: Ասեմք, որ այդ ամենը ոչ այնքան թուրքական սուլթանի ձեռքին պատանդի վիճակի թելադրանքի արդյունք էր, որքան թուլամտք ու անհեռատես պատրիարքի ու Պոլսի ամիրայական դասի մորթապաշտ համոզումը, համաձայն որի Ռուսաստանի օգնությանը դիմելը պարզապես դավաճանություն էր: Այդ առիթով Վարժապետյանն Անգլիայի դեսպանին ասաց՝ «հայ ազգը շատ ավելի կզերպազարտ օսմանյան կայսրության տակ մնալը, քան ռուսական իշխանությանը ենթարկվելը»: Թուրքիացիները, նրանք համոզված էին, որ Ռուսաստանի կազմում գտնվող Հայաստանի բնակչությունը, վաղ, թե՛ ուշ, դատապարտված է ձուլման, քանի որ «ռուսն ազգակույ է և կրոնակույ»: Հակառակը, Թուրքիայում ապրող հայն է անվտանգ վիճակում: Ավելին, այս անհեռատես ու իրողությունը չհամապատասխանող գաղափարը կիսում էր նաև էջմիածնի կարողիկոս Գևորգ Զորորդը (Պոլսի նախկին պատրիարքը): Ի դեպ այդ նույն գաղափարն էր որոճում նաև կարոլիկների պատրիարք Հասունյանը:

հայրենակիցների հետ ընդհանուր հայրենիքը պաշտպանելու արտաքին ընդամուց»:

Մեծ հաշվով, այս բախտորոշ պահին, հայությունը մնացել էր միմյանց հետ մրցող տարաբեռ երկու քաղաքական ուղղությունների մեջ տարուբերվող: Երև արևելահայությունը, սրաի գնահատելով իրավիճակը, հույսը կապում էր Ռուսաստանի հետ, այն համարելով իրական ու անվրեպ, ապա արևմտահայության հասարակական-քաղաքական միտքը բաժանվել էր. մի մասը՝ արևելահայության հունով գնալու կողմնակից, մյուս մասով՝ հայերի ճակատագիրը Եվրոպայի հետ կապելով, թուրքի իշխանության ներքո արտոնություններով բավարարվելով: Ռուսահայերը և «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Նոր դար» պարբերականների շուրջ համախմբված Թուրքիայի ազգային պահպանողականները գլխավոր նպատակ էին համարում ազգային միասնության ամրապնդումը, որը նրանք կապում էին արևմտահայության օսմանյան լուծը թորափելու, ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի շնորհիվ Արևմտյան Հայաստանի ազատագրման հետ:

Երբ հայտնի դարձավ մեծ տերությունների վեհաժողովի երավորման լուրը, այդ նույն պատրիարք Ներսես վարժապետյանը թուրքական կառավարության գիտությունը (գուցե՛ն ներշնչումով) դիմեց եվրոպական պետություններին, մայրաքաղաքներ ուղարկելով պատվիրակներ, հասկանալ տալու, որ հայերը միմիայն նրանցից են ակնկալելու օգնություն: Իրականում հիմնական նպատակն էր հօգուտ Թուրքիայի, ինչպես այսօր կասեին՝ լոբիիզացիան: Այդ շարքից էր Պետերբուրգ ուղարկված Պատրիարքի հեռագիրը, որով զգուշացվում էր, որ ռուսական մայրաքաղաքում գտնվող (հայտնի ռուսամետ ազգային գործիչ) Նար-Պեյր պաշտոնապես լիազորված չէ Ալեքսանդր II ցարի հետ բանակցելու:

Եվ ահա, 1878 թ. հունիսին Բեռլինում գումարվեց մեզ համար անբարեհիշատակ այդ վեհաժողովը: Կ.Պոլսից հայության պահանջները պաշտպանելու համար Բեռլին մեկնեց հայոց պատրիարքի և հայոց ազգային ժողովի լիազորված պատվիրակությունը: Ինչպես վերջինիս ղեկավար Սկրտչի Խրիմյանը, այնպես էլ պատվիրակության մյուս անդամները եվրոպական շրջանակներում բուրբոլվին անճանաչ, դիվանագիտության մեջ անհեռու մարդիկ էին: Ծուռով նաև պարզ դարձավ, որ պատվիրակությունն ազգային ճակատագրական խնդրի վերաբերյալ միասնական կարծիք չունեց: Իսկ «սրբազան պատվիրակությանը» Խրիմյանը, ունենալով Պատրիարքի հստակ հանձնարարականը՝ վաղորդ կողմնորոշված դեպի Անգլիա, մասամբ հակված դիվանագիտության հետ կապ չունեցող սողոմեյան հեղինակ ուղիքը պետք է նրա կողմը լինել: Միաժամանակ դեմ լինելով Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմից դուրս բերելու գաղափարին, քանի որ «հայերը չեն ուզեր «ազգակույ» ռուսին ճանկը ինկնալ»: Պատվիրակության մեկ այլ անդամ՝ Մինաս Զերազը, բացահայտ Անգլիայի կողմն էր ու անբարոյց անգլիաներ: Մեկ ուրիշը՝ վերջ երեշտակված Նար-Պեյր (Խորեն Գալֆայան), կողմնակից էր հայոց հարցը Ռուսաստանի միջոցով լուծելուն:

Ավելին, այդ օրերին Բեռլին ժամանեց եվրոպական մայրաքաղաքներում հարգված, Եգիպտոսի նախկին նախարարապետ Նուպար փաշան, ևս մեկ տարր ավելացնելով տարակողմ դիրքորոշումների խառնապատկերին: Ներսես կարողիկոսին նախորդ խղրելով իրեն լիազորել վեհաժողովին անձամբ ներկա

Լրացնելով անհեռատեսության այս խայտառակ էջը, տվյալ հարցում կրոնական առաջնորդներից ետ չլին մնում նաև օսմանյան պաշտամենտի 13 հայ երեսփոխանները՝ Ս. Մանուկյանը, Մ. Խարաճյանը, Պալքյանն ու Մարտիրոսյանը և մյուսները, իրենց ներքին ժողովրդին կոչ անելով «զենքի դիմել իսլամ

գտնվելու որպես հայության ներկայացուցիչ, նա եկել էր հայկական գավառներում բարենորոգումներ իրականացնելու սեփական ծրագրով: Եվ, իհարկե՛ն եվրոպացիների երաշխավորությամբ: Նրա ծրագրում ազգային անկախության մասին որևէ ակնարկ չկար, ըստ նրա, «հայերը պետք չունին ոչ քաղաքական անկախություն մը, ոչ օսմանյան պետությունն որևէ բաժանման, նրանք ազատություն կուզեն, իրենց ապահովությունը օսմանյան կառավարության կողմից երաշխավորող հաստատություններ»: Եվ, բնական է, որ նա միմիայն իրեն էր տեսնում հայկական ապագա միավորման կուսակալ:

Գործին խառնվեց ռուսական քաղաքական-դիվանագիտական վերնախավը, հանձին արդեն Ռուսաստանից դուրս համբավ ունեցող, ռազմական և դիվանագիտական բացառիկ տաղանդով օժտված մեծ հայի Լորիս-Մելիքովի: Նա հանդիպումներ ունեցավ վեհաժողովի «դիրքից» կանցելը Բիսմարկի և մասնակից ազդեցիկ երկրների պատվիրակությունների ղեկավարների հետ, «մարտախիճ» դիվանագիտության միջոցով փորձելով աչք ընթացքում ռուսաստանյան բարձրադիր մեկ այլ հայ պաշտոնյա՝ Գեյլանովը, ի հեճուկս երկրի շուրջնիստական շրջանների, ազգային խնդիրների հետամուտ հայասեր մեծ հայրենակցին՝ Լորիս-Մելիքովին հրապարակորեն պիտակեց որպես «խորամանակ արմյաչկա» - սա էլ ազգային անմիաբանության ևս մեկչերտ): Այդ ընթացքում Խրիմյանն ու Գալֆայանը ռուսական կայսրության ներկայացուցիչներին գրավոր հայտնեցին, որ իրենք ակնկալում են բարեխաղումներ, «որոնք տրվելու են եվրոպական Թուրքիայից քրիստոնյա ժողովուրդներին»: Ընդամենն այդքանը, քանի որ այն վարչակարգը, որի ներքո այսօր ժողովուրդն ապրում է «ռուսական Հայաստանում», մի քանի անգամ ավելի ճնշի է, քան կրում են եվրոպական Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդները: Հետևապես՝ նրանք քաղաքական ազատություն չեն պահանջում թուրքական կառավարությունից և չեն դնում նրանից անջատվելու պահանջ: Այս դիրքորոշման նկատմամբ ցարական պալատն էր ընդգծված զարմանքը հայտնեց Լորիս-Մելիքովին, ասելով, որ Չեր հրամանատարությամբ ռուսական զորքերը հսկայական զոհերի ու զրկանքների գնով հայկական նահանգներն ազատեցին բռնությունից, նրանց պաշտպանելով թուրքերից ու բրդերից, սակայն ձեր հայրենակիցները անզիպացիների փեշից չեն պոկվում: Իսկ վերջին հանգամանքը իր պատճառն ուներ. Անգլիան խոստացել էր հայերին անպայման տալ թագավորություն, «ռուսիո առջև պատնեշ կանգնելու համար»: Այդ ընթացքում պարզվեց, որ վեհաժողովի գործերին խառնվել է նաև պարսկահայ պետական գործիչ, դիվանագետ, Անգլիայում այդ երկրի նախկին դեսպան Մելքոն խանը, որն աշխատանք էր տանում հօգուտ Անգլիային ապավինելու, պատվիրակության արևմտամետ անդամների վրա ներազդելու ուղղությամբ: Այսպեսից հետո հարկ չկա ապացուցելու, որ սկզբից ենթ հայկական պատվիրակությունը, իմպերիալիստական պետությունների շահերիստ քաղաքականությունից և միջազգային դիվանագիտության նեղ խարդավանքներից զատ, իր անմիաբան ու տարամետ գործողություններով, սին խոստումներին անհեռատես ապավինելու պատրաստակարարությամբ, հաստատ դատապարտված էր ծախսողման: Իր եերքին, ինչպես վկայում են պատվիրակության անդամները, ամբողջ օրը վիճաբանում էին, յուրաքանչյուրը պաշտպանում իր տեսակետը, չկարողանալով ընդհանուր-միասնական դիրքորոշում որդեգրել, ներկայանալ միասնական պահանջով:

Արդյունքում Բեռլինի վեհաժողովի կողմից ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածով ճակտովեց հայկական հարցի արժարժումն անգամ, նույնիսկ՝ Հայաստանի անունը չիշխատակվեց: Չախտովեց եվրոպական տերությունների դավադիր խաղերի մեջ խճճված Պոլսի պատրիարքարանի, հայկական ամիրական ղեկավար շրջանակների և նրանց համակիրների որդեգրած քաղաքականությունը: Հայոց պատվիրակությունը վերադարձավ ձեռնունայն ու խորապես հիասթափված: Ի դերև եղան արևմտահայության, և, ընդհանրապես՝ ամբողջ հայության հույսերը: Ավելին, վեհաժողովից անմիջապես հետո, քի-նախնդիր վրեժի տրամաբանությամբ, ձեռնարկվել սկսեց հայության վերջնական բնաջնջման թուրքական ծրագիրը: Իսկ մեր պատմագրական գրականության մեջ, գոեթիկ սուբյեկտիվիզմի հանգով, մեղավոր են համարվում հայաստյաց ու նեղաբարո տերությունները, առանց դուրսն իսկ կերպով մեղքի բաժին ուղղելու դարավոր անմիաբանությանն ու քաղաքական-դիվանագիտական միամտությանը: Ծարունակում ենք պարզունակ կերպով ավելի շատ հպարտանալ «թղթե չերեփի» մասին Խրիմյանի սրամիտ արտահայտությամբ, քան ողբում մեր քաղաքական-դիվանագիտական անկարողությանը: Անշուշտ, պետականություն չունենիք, որ ճակատագրական նման հարցերը դիվանագիտական բանակցությունների սեղանին դրվին ազգային-պետական գերակայությունների դիրքերից: Մակայն անպետական գոյապայմաններում ազգայնապահպանման և հովվապետական իր գործառնություններից բացի, պետաիրավական-կարգավիճակային «ազգային փրկության կուսակցությունը»՝ հիմնադրելու պատասխանատվությունն իր վրա վերցրած մեր եկեղեցին, մտավորականությունն իր շուրջ համախմբած ազգային-հասարակական կազմակերպությունները, հիմնականում հատվածապաշտության հետևանքով, փաստորեն, անօգնական գտնվեցին:

Ի դեպ՝ դիվանագիտական նույն ծախսողումները (այս անգամ պատմաքաղաքական այլ հանգամանքների բերումով) կարելի էր երազով անցած դարի 20-ականների սկզբի Անարոնյանի և Ծանթի դիվանագիտական առաքելություններին: Մեր բերումով մեծ տերությունների շահերից բխող դիվանագիտական խաղերի առումով, որոշ վերապահումով, նույնը կարելի է ասել նաև Սևրի հաշտության պայմանագրի (1920 թ.), երկու տարի անց գումարված Լոզանի կոնֆերանսի մասին: (Ի դեպ՝ միջազգային քաղաքական հարաբերությունների կանոնիկ հոգեբանության մեջ փորձերին ու բույրերին սին խոստումներով շահադետ խաբերակերպաշտական երևույթը բնորոշվում է որպես «Ալիսոնյան բարդույթ»): Իսկ դա արդեն այլ խոսակցության նյութ է:



ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ ԵՎ ՄԵԾ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ

ԱՄՆ-ի 44-րդ և սևամորթ առաջին նախագահը երդվեց ազնվորեն ծառայել իր պետությանը

Հունվարի 20-ին Վաշինգտոնում տեղի ունեցավ Միացյալ Նահանգների 44-րդ և առաջին սևամորթ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը: Վաշինգտոնի ժամանակով 10:30-ին երդվեց Միացյալ Նահանգների փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը, որից հետո, ԱՄՆ-ի գերագույն դատարանի ղեկավար Ջոն Ռոբերթսի հետ միասին բեմահարթակ բարձրացավ Բարաք Օբաման: Չախ ձեռքը դնելով Աստվածաշնչին նա արտասանեց նախագահական երդման 35 բառերը: «Ես հանդիսավորությամբ երդվում եմ բարեխղճորեն կատարել Միացյալ Նահանգների նախագահի պարտականությունները և իմ ուժերի ողջ չափով պահպանել և պաշտպանել Միացյալ Նահանգների Սահմանադրությունը»: Ի դեպ, արարողության ժամանակ օգտագործված Աստվածաշնչի վրա երդվել է նաև Արրահամ Լինքոլնը:

Երդման արարողությունից հետո Օբաման հանդես եկավ ավանդական ճառով:

«Երկիրը գտնվում է պատերազմական վիճակում բռնության դժվարհասանելի ցանցի դեմ: Մեր տնտեսությունը բուլանցած է: Գա հետևանք է որոշ անձանց ընչաքաղցության ու անպատասխանատվության: Ես տերը կորցրել եմ բնակարանը, աշխատանքը, բիզնեսը: Այն մարտահրավերները, որոնց մենք բախվել ենք այսօր, շատ լուրջ են և բազմաբանակ: Մակայն մենք կհաղթահարենք դրանք: Լուծումը չի լինի հեշտ կամ արագ, սակայն իմացիր, Ամերիկա, լուծումներ կլինեն: Հարցն այն չէ, թե շուկան բարի է, թե չար: Այս ճգնաժամը հիշեցրեց մեզ, որ առանց պատշաճ հսկողության, այն ուժը, որը հարստություն է ստեղծում և մեծացնում ազատությունը, կարող է դուրս գալ վերահսկողությունից», -ասաց ԱՄՆ նախագահը:

Չորջ Բուշը՝ «գերթերազնահատված» պրեզիդենտը

Ամեն մի բաղաբական գործիչ ժամանակ առ ժամանակ բույլ է տալիս արտահայտություններ, որոնք հետո, երկար ժամանակ հարուցում են լրագրողների ծպիտը: Սակայն ԱՄՆ-ի պրեզիդենտ Չորջ Բուշը իր «պերճախոտությամբ» գերազանցեց բոլոր իր գործընկերներին և նախորդներին:

Ընդգծելու համար Բուշի «ամենահիշվող» արտահայտությունները, անգամ ստեղծեցին հատուկ տերմին «Բուշիզմ»:

Ստորև ձեռք ենք ներկայացնում Բուշի բարձրաձայնած «ամենթերազնահատից», որոնք հունվարի 20-ից հետո հազիվ թե հասնեն մեզ.

* «Նրանք ինձ գերթերազնահատել են» (Արկանզաս, 6 նոյեմբերի, 2000 թ.):

* «Թեև նախկինում մի երեսն ասացվածք կա. ես գիտեմ, որ այն Տերաստում է, սակայն, երևի թե Թեմենսիում: Ասացվածքն ասում է՝ խաբիթ ինձ մեկ անգամ-ամոթ է, ինչպես չես ամաչում: Խաբիթ ինձ մեկ անգամ և այլևս թեզ չես երկարացնի» (Նիվիլ, Թեմենսի, 17 սեպտ., 2002 թ.):

* «Միանգամայն ակնհայտ է, որ այն բոլորին, երբ ինձ ընտրեցին, հորիզոնում ամպրոպաբեր ամպերը հայտնվեցին ճիշտ և ճիշտ մեր գլխավերևում» (Վաշինգտոն, 11 մայիսի, 2001 թ.):

* «Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ ընկեր սենատոր Բիլլ Քրիստից նրա համար, որ նա այսօր մեզ հետ է: Ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ նա ամուսնացել է տերասացի մի աղջկա հետ: Ի դեպ, այսօր Կարինը նույնպես այստեղ է: Նա Արևմտյան Տերասայի աղջիկ է, ճիշտ ու ճիշտ սնց որ ես»: (Նիշվիլ, Թեմենսի, 27 մայիսի, 2004 թ.):

* Արդեն մեկ դար մու կես է, որ ԱՄՆ-ը և ճապոնիան ստեղծեցին ժամանակակից աշխարհի ամենահսկա և ամուր միություններից մեկը (Տոկիո, 16 փետրվարի, 2002 թ.):

* Ահաբեկչության դեմ պատերազմը ներառում է Մադամ Հուսեյնին ելնելով Մադամ Հուսեյնի բնույթից, Մադամ Հուսեյնի պատմությունից և ինքն իրեն ահաբեկելու նրա ցանկությունից» (Միչիգան, 29 հունվարի, 2003 թ.):

* «Ես կարծում եմ, որ պատերազմը վտանգավոր տեղ է» (Վաշինգտոն, 7 մայիսի, 2003 թ.):

* «Կեսպանը և գեներալը ինձ գեկուցեցին... Իրաքցիների բացարձակ մեծամասնությունն ուզում է ապրել խաղաղ, ազատ հասարակության մեջ: Եվ մենք կգտնենք այդ մարդկանց և նրանց կկանչենք դատարան պատասխանատվության» (Վաշինգտոն, 27 հոկտեմբերի, 2003 թ.):


* «Գիտեք, իմ աշխատանքում ամենամեծ դժվարություններից մեկը Իրաքը ահաբեկչության դեմ պատերազմի հետ կապելն է» (Մի-Քի-Էս-ի երթուղի, Վաշինգտոն, 6 սեպտեմբերի, 2006 թ.):

* «Որպես Տերասայի նահանգապետ ես պետական դպրոցների համար սահմանեցի բարձր չափանիշներ, և ես այդ չափանիշներին համապատասխանում եմ» (Մի-Էն-Էն-ի երթուղի, 30 օգոստոսի, 2000 թ.):

* «Ես հասկանում եմ, թե ինչպես է զարգանում փոքր բիզնեսը: Ես էլ եմ այն եղել» (Հարցազրույցից, 19 փետրվարի, 2000 թ.):

* «Իհարկե, դա բյուջե է: Ես նրա մեջ շատ քվեր ունեմ» («Մեյնթեր» գործակալություն, 5 մայիսի, 2000 թ.):

* «Ես շարունակում եմ վստահել Լինդային: Նրանից լավ աշխատանքի նախարար կտա՞ցի: Ելնելով նրանից, ինչ ես կարողացել եմ թերթերում: Նա լիովին արժանի թեկնածու է այդ աշխատանքի համար» (Տերասա, 8 հունվարի, 2001 թ.):



* «Առաջին երբին ես պետք է հստակ պարզաբանեմ աղքատ մարդիկ ամենևին պարտադիր չէ, որ լինեն մարդասպաններ: Եթե այնպես է պատահել, որ դու հարուստ չես, դա դեռ չի նշանակում, թե դու ուզում ես սպանել» (Վաշինգտոն, 19 մայիսի, 2003 թ.):

* «Առողջապահության ոլորտից հեռանում եմ չափազանց շատ լավ բժիշկներ: Անչափ շատ մանկաբարձներ. կինեզոլոգներ չեն կարողանում գործնականում իրականացնել իրենց սերը կանանց հետ ամբողջ երկրով մեկ» (Միսսուրի, 6 սեպտեմբերի, 2004 թ.):

* «Միացյալ Նահանգների Սենատը մեծ սխալ կգործեր, եթե բույլ տար, որ այս պալատից դուրս գա մարդու ինչ-որ կլոնավորում» (Վաշինգտոն, 10 ապրիլի, 2002 թ.):

* «Տեղեկատվությունը շարժվում է: Գիտեք ինչ երեկոյան նորությունները, իհարկե, մեկ միջոց է: Բայց այն շարժվում է և՛ Բոգոսլերայի, և՛ ինտերնետների միջոցով» (Վաշինգտոն, 2 մայիսի, 2007 թ.):

* «Ես գիտեմ, որ մարդն ու ձուկը ընդունակ են խաղաղ գոյակցությանը» (Միչիգան, 29 սեպտեմբերի, 2000 թ.):

* «Վնտանիքը այն տեղն է, ուր ազգը հույս է գտնում, իսկ թևերը՝ երազանք» (Վիսկոնսին, 18 նոյեմբերի, 2005 թ.):

* «Նրանք, որոնք ոչ լեզու մտնում են երկիր, խախտում են օրենքը» (Արիզոնա, 28 նոյեմբերի, 2005 թ.):

* «Մա Չորջ Վաշինգտոնն է, հասկանալի է, առաջին պրեզիդենտը: Ինչն է նրանում հետաքրքիրը, այն, որ վերջերս ես նրա մասին երեք, թե չորս գրքեր եմ կարդացել» (Հարցազրույցից, 5 մայիսի, 2006 թ.):

* «Լիդերության մասին ես այլ պատկերացում ունեմ: Լիդերությունը դա ինչ-որ մեկն է, որը միավորում է մարդկանց» (Թեմենսի, 18 օգոստոսի, 2000 թ.):

* «Ես նա եմ, ով որոշում է: Եվ ես եմ որոշում-ինչն է լավը» (Վաշինգտոն, 18 ապրիլի, 2006 թ.):

* «Բանը նրանում է, որ վաշինգտոնյան շատ զեկույցներից ոչ մեկը երբեք չեմ կարդում: Եվ որպեսզի ցույց տամ, թե սույն զեկույցը որքան կարևոր է ինձ համար, ես այն կարդացի և Թոմի Բլերը նույնպես կարդաց» (Չեկույց, որ նվիրված էր Իրաքի իրադրությանը, Վաշինգտոն, 7 հոկտեմբերի, 2006 թ.):

* «Երբ նահանգապետը զանգահարում է, ապա ես վերցնում եմ նրա խոսակցությունը: Ահա և բոլորը, ի՞նչ կարող եմ ես ձեզ ասել» (Դալի-Ֆորնիա, 25 հոկտեմբերի, 2007 թ.):

* «Երբ որևէ խելոք մարդ վերջապես կարգի, թե ինչ է տեղի ունեցել այս Օվալե աշխատասենյակում, ես վաղուց արդեն ձեզ հետ չեմ լինի» (Վաշինգտոն, 12 մայիսի, 2008 թ.):

ԶՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փարիզյան նշանավոր բժիշկ Անտուան Պորտալը այցելելով հիվանդին, որին խստագույն դիտես էր սահմանել, շոշափելով հիվանդի զարկերակը՝ նրան դիտողություն արեց իր նշանակումը չկատարելու և դիտեսան խախտելու համար:

- Ինչո՞ւ եք պինդ եփած հավկիթ կերել, - խիստ տոնով հարցրեց Պորտալը:

- Բժիշկ, մի՞թե զարկերակը շոշափելով դուք իմացաք, որ ես հավկիթ եմ կերել:

- Իհարկե, չէ որ հավկիթը պարունակում է ծծումբ և ֆոսֆոր:

Հիվանդը և Պորտալին ուղեկցող երիտասարդ ասիստենտը պարզապես ցնցված էին: Երբ բժիշկը և ասիստենտը կարք էին նստում, ասիստենտը հարցրեց.

- Բժիշկ, ես պատրաստ եմ ընկնել ձեր ոտքերը: Չէ՞ որ դա ոտղակի հրաշք է՝ զարկերակը շոշափելով իմանալ, որ հիվանդը հավկիթ է կերել:

- Ավանակ, չտեսար, որ նրա կզակին դեղնուցի հետքեր կային:

Նիլս Բորը կնոջ և հովանոցի երիտասարդ գիտնական Կազիմիրի հետ հյուրասիրությունից վերադառնում էր տուն: Կազիմիրը մոլի պապիլիստ էր: Նա պատմում էր իր նվաճած բարձունքների ու վարպետության մասին և որպես ապացույց առաջարկեց մագլցել առաջին իսկ պատահած շենքի տանիքը:

Երբ համաձայնությունը կայացավ, Կազիմիրը սկսեց արագ-արագ բարձրանալ վեր՝ օգտվելով պատի ելուստներից: Մի քիչ գինով Նիլս Բորը ինքն էլ ոգևորվեց և հետևեց Կազիմիրի օրինակին: Երբ նրանք բավականին բարձրացել էին, լավեցին սուլուցներ, ապա հայտնվեցին ոստիկանները: Պարզվեց, որ նրանք մագլցում էին բանկի պատով վեր...

Մտիսլավ Ռոստրոպովիչը հրաշալի հումորի զգացում ուներ: Մի անգամ «Սոյուզվոնցեբուր» նրան ուղեկցող սովեց՝ գործարանում, ընդմիջմանը համերգ տալ աշխատավորության համար:

Արտադրամասի տարբեր անկյուններում նստած բանվորները հանել էին իրենց նախաճաշիկները, ուտում էին ու զրուցում: Դժգոհ էին, առանց այն էլ հոգնած էին, հիմա էլ ինչ-որ մեկը եկել ու թալջութակ է նվազում: Այն էլ Բախ: Դժգոհության աղմուկը սկսեց աստիճանաբար աճել:

Ռոստրոպովիչը համբերեց-համբերեց և ապա հայտարարեց.

- Հիմա ես ձեզ համար կկատարեմ Բախի սյուիտը և կավարտեմ համերգը: Իսկ ընդհանրապես, հարգելի ընկերներ, Բախը թավջութակի համար գրել է վեց սյուիտ: Եվ եթե դուք շարունակեք ձեզ վատ պահել, ապա ես վեցն էլ կնվազեմ ձեզ համար...

Սպառնալիքը ներգործեց...

Վրացական բալլադ

Երիտասարդ մի վրացի Մոսկվայով մեկ փնտրում էր իր ընկերներին, որոնք, ըստ լուրերի, ինչ-որ ռեստորանում թեֆ են անում:

Նա շրջեց Մոսկվայի ռեստորանների մեծ մասը և ուշ գիշերին վերջապես գտավ նրանց: Կարճ և անզիջում վեճից հետո, թե ով պետք է վճարի, նա հաղթանակեց. փակեց կերած-խմածի հաշիվը և երջանիկ ու գոհ գնաց հյուրանոց:

Գիտություն Ի տեղի գլխավոր խմբագրի՝
 Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
 Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268,
 գրանցման վկայական՝ 448:
 Ստորագրված է տպագրության՝ 29.01.2009 թ.:
 "ТИТУТЮН" ("Hayka") gazeta HAH PA